Գիտահետազոտական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Կարող է իրականացվել ամբիոնի կամ լաբորատորիայի գիտական թեմաների շրջանակներում: Ունի 3 կրեդիտ աշխատաժամով:

Գիտամանկավարժական պրակտիկան կազմակերպվում է 4-րդ կիսամյակում՝ գիտական ղեկավարի հետ համատեղ կազմված և հաստատված ծրագրով: Այն ևս ունի 3 կրեդիտ աշխատաժամով:

Մագիստրոսական թեզի կատարումը և նրա պաշտպանությունը

մագիստրոսի կրթական ծրագրի եզրափակիչ փուլն է, որն իրականացվում է 4-րդ կիսամյակում: Մագիստրոսական թեզի կատարման և պաշտպանության համար ծրագրում նախատեսվում է 15 կրեդիտ աշխատաձևով:

Մաս II.

ԴԱՍԸՆԹԱՅՆԵՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐՔ

1. ՏԵՂԵԿԱԳՐՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Ղասընթացների տեղեկագիրքը նախատեսված է «Միջազգային հարաբերությունների» ամբիոնում իրականացվող մագիստրոսի կրթական ծրագրի նույնանուն մասնագիտության վերաբերյալ տեղեկատվությունը ուսանողներին, դասախոսական ու վարչական կազմին, ինչպես նաև լայն հանրությանը մատչելի դարձնելու համար և պարունակում է ամփոփ տեղեկատվություն ինչպես ուսումնական ծրագրի, այնպես էլ դրա բաղադրիչ ղասընթացների և ուսումնական մոդուլների վերաբերյալ: Այն ներառում է՝

- կրթական ծրագրի ընդհանուր նկարագրությունը՝ շնորհվող որակավորումը, ծրագրի նպատակները և նախանշված ելքային կրթական արդյունքները, ծրագրի բովանդակային կազմը և կրեդիտների կառուցվածքը, ավարտական պահանջներն ու ատեստավորման ձևերը, պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվությունը և այլն,
- առանձին ղասընթացների և ուսումնական մոդուլների հակիրճ նկարագիրը՝ ղասընթացի անվանումը և նույնացման թվանիշը, ուսուցման կիսամյակը, ղասընթացին հատկացված կրեդիտները, ղասընթացի հակիրճ բովանդակությունը, ուսուցման և գնահատման մեթոդներն ու չափանիշները:

Ընդհանուր և մասնագիտական դասընթացներ

05/M08. Համակարգչագիտություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Moodle հեռաուսուցման հարթակում ուսուցանելու ընթացքում ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի ուսանողները ինքնուրույն ձեռք բերեն լրացուցիչ մասնագիտական գիտելիքներ, ձեռք բերած գիտելիքը կարող լինեն գրավոր և բանավոր խոսքով ներկայացնել, բարդությունները հնարավորինս հաղթահարել: Ծրագրի խնդիրներն են՝ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողին գիտելիքներ հաղորդել ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման մասին, որի հետևանքով ուսանողը կկարողանա ավելի խորը հետազոտությունները կատարել իր ոլորտում:

Դասընթացն ընդգրկում է ինֆորմացիայի տեսակների նկարագրությունները՝ թվային, տեքստային, ձայնային, պատկերներ և տեսաշարեր և այլն: Թվային ինֆորմացիայի ներկայացում տարբեր թվային համակարգերում, մշակում, արտապատկերում ինֆորմացիայի այլ տեսակների միջոցով: **Կրթական արդյունքները.**

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

ԱՀ արտաքին և ներքին կառուցվածքը, ներքին սարքավորումների նպասակը:

Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր:

2. կհասկանա Windows 7, 8, 10 ՕՆ հիմնական տարրերը, աշխատանք պատուհանի հետ, ֆայլային համակարգ, աշխատանք ֆայլերի հետ, անվտանգություն:

Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտական կայքեր: Անվտանգություն: Ամպային տեխնոլոգիաներ:

3. կկարողանա կատարել MS Word 2010, MS Excel 2010, MS Power Point 2010

Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում

Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

3.1 MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում, դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում:

3.2 MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում՝ բանաձևերի մուտքագրում, գրաֆիկների կառուցում ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում:

3.3 MS Office Word տեքստային խմբագրիչում՝ տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում, և ձևավորում:

Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ (մասնավորապես՝ ներմուծել **MS Office Excel** աղյուսակը **MS Office Word**) MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստեր և ռեֆերատների պատրաստում:

Հողվածներում, ռեֆերատներում հղումների ստանդարտների հետ աշխատել՝ մասնավորապես, IEEE 2006, ГОСТ(сортировка по именам) ГОСТ(сортировка по названиям) և այլն այլ ստանդարտներով աշխատել ինչպես նաև «**Բովանդակություն**» կազմել օգտագործելով **MS Office Word** հրամաններից:

Բովանդակությունը.

Թեևա 1՝ ԷՀՄ-ի պատմությունը, սերունդները: Անհատական համարգչի կառուցվածքը, արտաքին և ներքին սարքեր, էլքի-մուտքի սարքեր: Ինֆորմացիայի ներկայացման ձևերը, չափման միավորները: Հիշողության տեսակներ և կազմակերպման ձևեր: Օպերացիոն համակարգեր հիմնական տարրերը: Windows օպերացիոն միջավայրում աշխատանք պատուհանների և ֆայլերի հետ: – վերջնարդյունք՝ Կկարողանա ինքնուրույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: **Թեևա 2՝** Համակարգչային և կիրառական ծրագրեր: Ուտիլիտային ծրագրեր: Վիրուսներ և հակավիրուսային ծրագրեր: ՏՀՏ գրաֆիկական սարքավորումներ և դրանց կիրառումը մասնագիտական ոլորտում: Հաշվողական ցանցերի դասակարգում: Լոկալ ցանցերի տոպոլոգիա: Ինտերնետ ցանցի ծառայություններից օգտվելու մեթոդներ: Մասնագիտությանը առնչվող օգտակար կայքեր – Կկարողանա ճիշտ և անվտանգ աշխատել համացանցում::

Թեևա 3՝ MS Office Word տեքստային խմբագրիչի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Word տեքստային խմբագրիչում տեքստի մուտքագրում, խմբագրում և ձևավորում: Աշխատանք աղյուսակների և օբյեկտների հետ MS Office Word տեքստային խմբագրիչում: MS Office Word տեքստային խմբագրիչի միջոցով մասնագիտական թեստերի պատրաստում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – Կկարողանա պատրաստի մագիստրոսական թեզի համար պատրաստել սենտրիանդես և ներկայացնել այն: **Թեևա 4՝** MS Office Excel էլեկտրոնային աղյուսակների գործիքային վահանակի ֆունկցիաները: Տվյալների մուտքագրում, տիպերի հայտարարում և աղյուսակի ձևավորում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – վերջնարդյունք՝ աշխատել ցուցակների հետ: **Թեևա 5՝** Թվաբանական գործողություններ տվյալների հետ, դիագրամների կառուցում MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Աշխատանք ֆունկցիաների հետ MS Office Excel էլեկտրոնային աղյուսակում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում: Բանաձևերի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – վերջնարդյունք՝ Կկարողանա ինքնուրույն գրել, մուտքագրել մագիստրական թեզը, կատարել հղումներ, համարակալում, թվարկում, նկարների, աղյուսակների և գրաֆիկների տեղադրում, կկարողանա կառուցել բովանդակություն և գրականության ցանկը և այլն: **Թեևա 6՝** MS Office Power Point շնորհանդեսային ծրագրի գործիքային վահանակի ֆունկցիաները: MS Office Power Point ծրագրում դրվագների ավելացում, ձևավորում, յուրաքանչյուր դրվագի համար անիմացիաների կարգավորում; MS Office PowerPoint ծրագրի դրվագներում օբյեկտների ներմուծում, ձևավորում, դրվագում յուրաքանչյուր

օբյեկտի համար անիմացիաների կարգավորում: Տեքստի մուտքագրում, ձևավորում և դրանց հետ առնչվող յուրահատուկ խնդիրների պարզաբանում և շտկում – վերջնարդյունք՝ գրաֆիկական պատկերներով, նկարներով, աղյուսակներով ներկայացնել մագիստրոսական թեզը:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննություններից մեկն անցկացվում է ուսանողի գրավոր աշխատանքի, իսկ մյուսը՝ բանավոր ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Լրացական դասընթացներ

18/M01. Մասնագիտական օտար լեզու (անգլերեն- 1-2) (0 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

ներկայացնել օտար լեզուների ուսուցման և ուսումնառության ավանդական և ժամանակակից մեթոդները, մոտեցումները, հայեցակարգերը, միաժամանակ խրախուսել ժամանակակից լեզուների ուսուցման այնպիսի մեթոդների կիրառումը, որոնք կարող են ամրապնդել սովորողների լեզվաբանական գիտելիքները՝ դրանք համադրելով հաղորդակցական կարողությունների հետ,

քննության առնելով արդի լեզվաքաղաքականության հիմնախնդիրները՝ դիտարկել սովորողների հաղորդակցական իրազեկության ձևավորումն ու զարգացումը՝ որպես հաղորդակցական ուսուցման կազմակերպման գլխավոր նպատակ և արդյունք,

մասնագիտական օտար լեզվի ուսուցման գործընթացում ապահովել ուսանողակենտրոն դասավանդման մեթոդաբանություն, համադրել սովորողների լեզվաբանական կարողությունների ձևավորումն ու զարգացումը խոսքային գործունեության ընկալողական և վերարտադրողական տեսակների հետ և դիտարկել դրանք փոխադարձ կապի մեջ,

համաշխարհային ինտեգրացիոն գործընթացներից ելնելով՝ կարևորել լեզու սովորողների ոչ միայն լեզվական ձեռքբերումները, այլև համագործակցային, միջմշակութային կարողությունների ձևավորումն ու զարգացումը, հանդուրժողականության, փոխադարձ ըմբռնման և հասարակական ներդաշնակ զարգացման գիտակցումը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կտիրապետի

օտար լեզուների ուսուցման ավանդական և ժամանակակից մեթոդներն ու մոտեցումները

մասնագիտական օտար լեզվի հաղորդակցական ուսուցման ժամանակակից միտումները, գլխավոր սկզբունքները, ռազմավարությունները, առանձնահատկությունները լեզվական միջոցների՝ մասնագիտական բառապաշարի, քերականության և հնչյունաբանության փոխկապակցված ուսուցումը՝ որպես սովորողների լեզվահաղորդակցական կարողությունների ձևավորման և զարգացման հիմք

խոսքային գործունեության ռեցեպտիվ-ընկալողական և պրոդուկտիվ-վերարտադրողական տեսակների տարբերակումը բանավոր և գրավոր խոսքային գործունեության փոխկապակցված ուսուցումը

սովորողների խոսքային գործունեության զարգացմանը նպատակաուղղված ռազմավարությունները:

2. կկարողանա

սահմանել մասնագիտական օտար լեզվի նպատակներն ու խնդիրները

դիտարկել ավանդական և ժամանակակից տերմինաբանության առանձնահատկությունները

տարբերակել հաղորդակցական իրազեկության բաղադրիչները, ցույց տալ լեզվական իրազեկության և հաղորդակցական իրազեկության փոխադարձ կապը

համադրել լեզվական գիտելիքները հաղորդակցական կարողությունների հետ:

3. կպատրաստի

լեզվական միջոցների ընկալման և օգտագործման կարողություններին լեզվական միջոցների և խոսքային հաղորդակցության ուսուցման նոր, առավել փոխներգործուն տեխնոլոգիաներին

տարբեր մակարդակների (հնչյունաբանական, քերականական, մասնագիտական բառապաշարի) լեզվական երևույթների զուգադրական վերլուծության սկզբունքներին

մեկ լեզվից մյուսը մասնագիտական տեքստեր թարգմանելու և մեկնաբանելու հմտություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Subject introduction. Presentation of the syllabus. (Placement test). Short talk with the students for the Evaluation of the student's individual needs and assessment of general English knowledge – վերջնադրյունք՝ Introduction of the course syllabus, objectives and outcomes of the course. As long as everyone arrives at ISEC with different knowledge and ability levels due to their unique schooling situation and academic strengths we check Ss's level of English through placement test and discussions **Թեմա 2**՝ The Concept of International Law – վերջնադրյունք՝ To get acquainted with the concept of international Law as a system of legal relations which condition social action to serve the common interest. To be able to use the thematic vocabulary in the context. **Թեմա 3**՝ International Organizations – վերջնադրյունք՝ Demonstrate knowledge and critical understanding of the historical development of international organization, their structure, concept and their current operations in different issue areas 2) Analyze contemporary

debates on the role and effect of international organizations as forums for inter-state cooperation and as actors in international relations **Թեմա 4**՝ Mid-term test – վերջնարդյունք՝ The students take a written test graded 7 balls which comprises their knowledge in the above mentioned themes. We check knowledge of the thematic vocabulary phrases, prepositions and also the ability to use the terms in the context through translations. **Թեմա 5**՝ The United Nations Organizations – վերջնարդյունք՝ To get acquainted with the History of the United Nations Organization, the main organs of the UN: the General Assembly, the Security Council, the Economic and Social Council, the Trusteeship Council, the International Court of Justice, and the UN Secretariat. Thematic Vocabulary **Թեմա 6**՝ Preparation for the final exam, revision of the previous units, prof. Vocab – վերջնարդյունք՝ To enable the students to thoroughly prepare for the final exam **Թեմա 7**՝ Final exam – վերջնարդյունք՝ To make a **final** review of the topics covered and assessment of each student's knowledge of the prof. vocabulary and the ability to use it within a context. **Թեմա 8**՝ **The law of treaties – վերջնարդյունք՝** Principally treaties between states—are considered authoritative statements of international law. Treaties are the strongest and most binding type because they represent consensual agreements between the countries who sign them. Here the task is to get acquainted with treaties, their classification, conclusion, invalidity, termination and suspension. **Թեմա 9**՝ Diplomatic and Consular Law -վերջնարդյունք՝ Get acquainted with the main principles of diplomatic and consular law. Special attention is given to 1) Diplomatic law as part of public international law, 2) The historical development of diplomatic law, 3) Terms and definitions in diplomatic law, 4) Diplomatic immunity, 5) Personal inviolability, 6) Diplomatic communications, 7) Inviolability of premises/diplomatic asylum, 8) Taxation of diplomats and consuls **Թեմա 10**՝ Mid-term Exam – վերջնարդյունք՝ The students take a written test graded 7 balls which comprises their knowledge in the above mentioned themes. We check knowledge of the thematic vocabulary phrases, prepositions and also the ability to use the terms in the context through translations.

Թեմա 11՝ Human Rights and International Law - *վերջնարդյունք*՝ To get acquainted with the Concept of the International Protection of Human rights definition of universal rights, Racism, Apartheid, Treaties on Human Rights. To be able to use Prof. Vocab **Թեմա 12**՝ Introduction of Project titles and skills of preparing a Power-point presentation Video presentation on the topic “Secrets of presentation by Steve Jobs” – վերջնարդյունք՝ To get acquainted with the main steps of preparing and presenting a presentation **Թեմա 13**՝ Final – վերջնարդյունք՝ To make
1. A **presentation** of the selected topic covered
2. assessment of each student's knowledge of the prof. vocabulary and the ability to use it within a context.

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

18/M04. Մասնագիտական օտար լեզու (ռուսերեն- 1-2) (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողները ուսուցանելու են ռուսերենը, որպես մասնագիտական լեզու, որն իր մեջ ներառում է քորականական ժամանակաձևերի, կառուցվածքների ուսումնասիրում և ամրապնդում՝ նախապես մշակված վարժությունների և թեմատիկ նյութերի միջոցով, համապատասխան մասնագիտական տերմինների, բառերի ու արտահայտությունների ուսումնասիրում և տիրապետում՝ համապատասխան տեքստերի միջոցով, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու ուսանողներին զրգացնելու խոսքի հմտություններն ու կարողությունները: Ծրագրի շրջանակներում նախատեսված է ուսանողներին ծանոթացնել լեզվի ուսումնասիրման հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև հմտություններին՝ ինչպես հաղթահարել ուսուցման ընթացքում ծառայած խնդիրներն ու դժվարությունները:

Դասընթացների միջոցով ուսանողները ձեռք կբերեն ռուսերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներ, որը կնպաստի նրանց հետագա մասնագիտական գործունեությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կտիրապետի

- Ռուսերենի տեսական և գործնական գիտելիքներին;
- Ռուսերենի /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված ուսանողի անհատական ունակություններից/;
- Մասնագիտական տերմինների, կապակցությունների, արտահայտությունների;
- Քերականական ժամանակաձևերին և կառուցվածքներին;
- Օտար լեզուն ուսումնասիրելու մեթոդիկային

2. կկարողանա

- Խոսել, հարաբերվել ռուսերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և անհրաժեշտ պաշար,
- Լսել, հասկանալ և վեկանտադնել ռուսերեն տեքստեր;
- Մասնակցել քննարկումների կամ երկխոսությունների;
- Օգտվել ռուսերեն լեզվով մասնագիտական գրականությունից՝ խորացնելով մասնագիտական գիտելիքները;
- Արդյունավետորեն կիրառել բառարաններ;
- Պատրաստել պրեզենտացիաներ, զեկույցներ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Этикетные нормы «Знакомство. Обращение. Умение представлять и представляться. Извинение». Лексико-грамматическая работа над текстом по специальности. Языковой материал. Простое предложение. Парадигма предложения. Текст как синтаксическая единица. – վերջնարդյունք՝ Ուսումնասիրված նյութի գործնական կիրառում բանավոր և գրավոր խոսքում : **Թեմա 2՝** Человек в современном мире. Чтение и пересказ текста. Работа над новой лексикой. Составление вопросов к тексту. Языковой материал. Типы предложений по цели высказывания. Интонационные конструкции. Смысловые отношения между

предложениями и частями текста. Способы связи предложений в тексте: связь цепная и параллельная. Самостоятельные и зависимые предложения. – վերջնարդյունք՝ Աշխատանք տարբեր ոճի և ժանրերի տեքստերի հետ քերականական, ոճական և տրամաբանական վերլուծությամբ: **Թեմա 3** Современный мир. Проблемы демографии. Работа над тестом по специальности с лексико-грамматическим, стилистическим и логическим анализом. Языковой материал. Особенности русского языка. Гласные в ударных и безударных слогах. Ритмика русского слова. – վերջնարդյունք՝ Ուսումնասիրված նյութի կիրառում բանավեճի ժամանակ: Մեփական կարծիքի հիմնավորում: **Թեմա 4**՝ Удачливый человек – какой он. Что нужно для успеха? Чтение и пересказ текста. Объяснение новой лексики, употребление в вопросно-ответной беседе. Сокращение текста. Озаглавить текст.

Языковой материал. Парадигма склонения существительных. Наклонение глагола. – վերջնարդյունք՝ Ուսումնասիրված նյութի գործնական կիրառում բանավոր և գրավոր խոսքում: **Թեմա 5**՝ Аудирование текста «Как добиваться целей». Анализ текста с лексикограмматическим, стилистическим и логическим анализом. Составление вопросов к тексту. Выполнение письменных заданий.

Языковой материал. Ритмика русского слова. Главные члены двусоставного предложения. Выражение подлежащего – վերջնարդյունք՝ Ուսանողների միջմշակութային շփման ունակությունների զարգացում ուսումնասիրված լեզվային միավորների կիրառմամբ: **Թեմա 6**՝ Деловые люди. Этикет делового человека. Имидж. Языковой материал. Основные значения управляемых падежей.

Письменные задания. – վերջնարդյունք՝ Հիմնական քերականական և ուղղախոսական երևույթների և կառույցների կիրառում բանավոր և գրավոր խոսքում և շփման ժամանակ: **Թեմա 7**՝ Проблемы молодых семей. Чтение и пересказ текста. Свертывание текста. Участие в дискуссии по теме. Языковой материал Наклонение глагола. Вид глагола. Переходные глаголы. Основные значения управляемых падежей. – վերջնարդյունք՝ Ուսումնասիրված լեզվային միավորների կիրառում մասնագիտական և սոցիալ-մշակութային ոլորտներում: **Թեմա 8**՝

Каким я вижу будущее моей страны. Подготовка докладов по теме. Участие в беседе. Составление плана выступления. Ключевые слова и словосочетания. Языковой материал Составное глагольное сказуемое. Простое глагольное сказуемое. Твердые и мягкие согласные. Согласный. – վերջնարդյունք՝ Ուսումնասիրված նյութի վերաբերյալ սեփական տեսակետի ներկայացում և հիմնավորում մենախոսություն և երկխոսության ժամանակ: **Թեմա 9** Современная молодежь – какая она? Презентация по теме занятия. Языковой материал.

Выражение прямого и косвенного объекта. Понятие об управлении. – վերջնարդյունք՝ Գիտական խոսքի հիմնական հատկությունների տիրապետում: **Թեմա 10**՝ Экология в современном мире. Чтение и анализ текста. Подготовка реферата по теме занятия. Языковой материал. Виды подчинительной связи: согласование, управление, примыкание. Выполнение письменных заданий. –

վերջնարդյունք՝ Հրապարակա-յին խոսքի հիմ-նական հմտությունների տիրապետում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

18/M02. Մասնագիտական օտար լեզու (գերմաներեն- 1-2) (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

Երկու կիսամյակ տևող ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին ուսուցանել մասնագիտական գերմաներեն, որը ներառում է համապատասխան մասնագիտական եզրույթների և արտահայտությունների, քերականական կառույցների, ժամանակաձևերի ուսումնասիրում և տիրապետում, մեթոդական կողմնորոշիչ ցուցումներ՝ ձեռք բերված գիտելիքն ամրապնդելու և վերարտադրելու, տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու սովորողներին զարգացնել խոսքային հմտություններն ու կարողությունները: Դասընթացը ենթադրում է նաև լրացուցիչ մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի ուսումնասիրություն, ինքնուրույն աշխատանք:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա.

- գերմաներենի ժամանակաձևերը, քերականական կառուցվածքները, մասնագիտական հիմնական բառապաշարը
- գերմաներենի իմացության խորացմանը նպաստող անհրաժեշտ ուսումնական ձեռնարկների, դասագրքերի արդյունավետ օգտագործման ձևերն ու եղանակները,
- համապատասխան մեթոդներ՝ մասնագիտական եզրույթների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար,
- տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման ձևերը

2. կկարողանա ուսումնասիրել և հետազոտել.

- ճիշտ օգտագործել ժամանակաձևերն ու կառույցները
- օգտվել գերմաներեն մասնագիտական գրականությունից, մեթոդական ուղեցույցներից՝ խորացնելու մասնագիտական գիտելիքը,
- արդյունավետ օգտագործել բառարանները,
- պատրաստել ներկայացումներ , զեկուցումներ,
- խոսել գերմաներեն՝ կիրառելով մասնագիտական եզրույթների և արտահայտությունների անհրաժեշտ պաշար,
- լսել և հասկանալ գերմանալեզու տեքստեր,
- մասնակցել բանավոր քննարկումների, բանավեճերի, երկխոսությունների:

3. կտիրապետի.

- քերականական կառույցներին և ժամանակաձևերին,
- գերմաներենի տեսական և գործնական գիտելիքին,

- գերմաներեն խոսակցական լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված ուսանողների ընդունակություններից/,
- մասնագիտական տերմինաբանությանն ու բառապաշարին, գերմաներենից հայերեն և հայերենից գերմաներեն մասնագիտական և ոչ մասնագիտական տեքստերի թարգմանական տեխնիկային

Բովանդակությունը.

Թեմա 1՝ ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ – վերջնարդյունք՝ Ներկայացնել դասընթացի ծրագիրը և նպատակները, ստուգել ուսանողների գերմաներենի մակարդակը թեստավորման միջոցով **Թեմա 2՝** Berufe und Familie – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ մասնագիտություն և ընտանիք թեմայով կարողանալ կիրառել երկխոսության մեջ **Թեմա 3՝** Wohnen – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ բնակվել թեմայով կիրառել երկխոսության մեջ **Թեմա 4՝** Tourismus – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ գրոսաշրջություն թեմայով ներկայացնել սեփական բիզնես գաղափարներ, դիտել հոլովակ և քննարկել այն **Թեմա 5՝** Einkaufen – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ գնումներ կատարել թեմայով, կազմել ճաշացուցակ և կատարել պատվերներ **Թեմա 6՝** Stadtbesichtigung – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ քաղաքի այցելություն թեմայով **Թեմա 7՝** Kultur – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ մշակույթ թեմայով, ներկայացնել սիրված մշակութային իրադարձությունները, դիտել հոլովակ և քննարկել այն **Թեմա 8՝** Sport und Fitness – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ սպորտ և ֆիթնես թեմայով, կազմել ձեռք ֆիթնես պլանը **Թեմա 9՝** Gesundheit und Krankheit – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ առողջություն և հիվանդություն թեմայով, կիրառել երկխոսության մեջ **Թեմա 10՝** Arbeitsleben – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ աշխատանքային կյանք թեմայով, նկարագրել ապագա աշխատանքը դիտել հոլովակ և քննարկել այն **Թեմա 11՝** Im Restaurant – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ ռեստորանում թեմայով, կիրառել երկխոսության մեջ **Թեմա 12՝** Firmenporträt – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ ֆիրմայի ներկայացում թեմայով, կիրառել երկխոսության մեջ **Թեմա 13՝** Ernährung – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ սնունդ թեմայով, ներկայացնել ուտելու սովորույթները Հայաստանում և Գերմանիայում, խորհուրդներ տալ առողջ սնունդի վերաբերյալ, դիտել հոլովակ և քննարկել այն **Թեմա 14՝** Post und Telekommunikation – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ պոստ և հեռահաղորդակցություն թեմայով, կիրառել երկխոսության մեջ **Թեմա 15՝** Medien – վերջնարդյունք՝ Սովորել բառեր և բառակապակցություններ լրատվամիջոցներ թեմայով, ներկայացնել տարբեր լրատվամիջոցներ, դիտել հոլովակ և քննարկել այն:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգարքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

18/M03. Մասնագիտական օտար լեզու (Ֆրանսերեն- 1-2) (0 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին և 2-րդ կիսամյակ, ստուգարք

Նպատակը.

երկու կիսամյակ տևողությամբ ուսումնական գործունեության ընթացքում ուսանողները ուսուցանելու են ֆրանսերենը, որպես մասնագիտական լեզու, որն իր

մեջ ներառում է քորականական ժամանակաձևերի, կառուցվածքների ուսումնասիրում և ամրապնդում՝ նախապես մշակված վարժությունների և թեմատիկ նյութերի միջոցով, համապատասխան մասնագիտական տերմինների, բառերի ու արտահայտությունների ուսումնասիրում և տիրապետում՝ համապատասխան տեքստերի միջոցով, տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում՝ օգնելու ուսանողներին զրգացնելու խոսքի հմտություններն ու կարողությունները: Ծրագրի շրջանակներում նախատեսված է ուսանողներին ծանոթացնել լեզվի ուսումնասիրման հետ կապված խնդիրներին, նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև հմտություններին՝ ինչպես հաղթահարել ուսուցման ընթացքում ծառայած խնդիրներն ու դժվարությունները:

Դասընթացների միջոցով ուսանողները ձեռք կբերեն ֆրանսերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներ, որը կնպաստի նրանց հետագա մասնագիտական գործունեությանը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա.

- Քերականական ժամանակաձևերի, կառուցվածքների ճիշտ օգտագործման ձևերն ու ուղղիները,
- Մասնագիտական անհրաժեշտ բառապաշար և տերմիններ, որոնք ուսանողներին կօգնեն կարդալ և հասկանալ մասնագիտական տեքստեր,
- Մասնագիտական բառարաններից և ձեռնարկներից արդյունավետ օգտվելու եղանակները,
- Համապատասխան մեթոդիկա՝ մասնագիտական տերմինների և բառապաշարի մտապահման և ամրապնդման համար;

- Տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառում

2. կկարողանա ուսումնասիրել և հետազոտել.

- Խոսել, հարաբերվել ֆրանսերենով՝ կիրառելով մասնագիտական տերմինների և անհրաժեշտ պաշար,
- Լսել, հասկանալ և վեհանտառել ֆրանսերեն տեքստեր;
- Մասնակցել քննարկումների կամ երկխոսությունների;
- Օգտվել ֆրանսերեն լեզվով մասնագիտական գրականությունից՝ խորացնելով մասնագիտական գիտելիքները;
- Արդյունավետորեն կիրառել բառարաններ;
- Պատրաստել պրեզենտացիաներ, զեկույցներ:

3. կտիրապետի.

- Ֆրանսերեն լեզվի տեսական և գործնական գիտելիքներին;
- Ֆրանսերեն լեզվին /բավարար, միջին կամ ավելի բարձր մակարդակով՝ կախված ուսանողի անհատական ունակություններից/;
- Մասնագիտական տերմինների, կապակցությունների, արտահայտությունների;
- Քերականական ժամանակաձևերին և կառուցվածքներին;

Օտար լեզուն ուսումնասիրելու մեթոդիկային

Բովանդակությունը.

1-ին կիսամյակ

Թեմա 1՝ Ներածություն – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում,
մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 2**՝ La phrase française / L'article – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում **Թեմա 3**՝ Verb du I groupe / pluriel des noms – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 4**՝ L'absence de l'article / Question sur le sujet – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 5**՝ Adjectifs possessifs / L'article Défini – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 6**՝ Forme négative du verbe / Le Féminin des noms – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 7**՝ Գիտելիքի ստուգում (I փուլ) – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում. բանավոր խոսքի հմտությունների զարգացման մակարդակի ստուգում **Թեմա 8**՝ Նախագիծ – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 9**՝ Verb du III groupe / L'emploi de l'aticle – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 10**՝ L'article contracté / pronoms personnels - le, la, les – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 11**՝ L'article défini / prépositions à, de – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 12**՝ Pluriel des verbes / pronrom indéfini – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 13**՝ La conjugaison des verbes du I groupe – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 14**՝ La conjugaison du verbe “aller” / Verbes du III groupe – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 15**՝ Նախագիծ – վերջնաբրայունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և

մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 16** Եզրափակիչ ստուգաբանք – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում. բանավոր խոսքի հմտությունների զարգացման մակարդակի ստուգում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգաբանքն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

2-րդ կիսամյակ

Թեմա 1 Adverbes “en” “y” / pronom “en” / “ Le 14 Juillet” (I partie) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում **Թեմա 2** “ Le 14 Juillet” (II partie) (c’est, cesont) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտություններ զարգացում, **Թեմա 3** “La Marseillaise” (questionnaire) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 4** “Une année scolaire” (I partie) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 5** “Une année scolaire” (II partie) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 6** “De la maternelle à l’université” – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 7** Գիտելիքի ստուգում (II փուլ) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում. բանավոր խոսքի հմտությունների զարգացման մակարդակի ստուգում **Թեմա 8** Նախագիծ – ներջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 9** “Un cours de français (grammaire)” (I Partie) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 10** “Un cours de français” (II Partie) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 11** “ Une class d’ histoire” – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 12** “ Paul va au lycée” (texte complémantaire) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 13** “ Une promenade à travers Paris” (I Partie) / passé composé – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի

զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 14** “ Une promenade à travers Paris” (II Partie) – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 15** Նախագիծ – վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի զարգացում, մասնագիտական տեքստի, թարգմանություն, վերլուծություն և մեկնաբանում, բանավոր խոսքի հմտությունների զարգացում, **Թեմա 16** Եզրափակիչ ստուգաբար՝ վերջնարդյունք՝ մասնագիտական բառապաշարի տիրապետման մակարդակի ստուգում. բանավոր խոսքի հմտությունների զարգացման մակարդակի ստուգում:

Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Ստուգաբարձն անցկացվում է բանավոր հարցման ձևով՝ անցած նյութի հիման վրա:

Տիտղոսային ծրագրի պարտադիր դասընթացներ

12/M01. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության հիմնահարցեր (հին և միջին դարեր) (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին՝ ապագա միջազգայնագետներին, քաղաքագետներին, դիվանագետներին, նաև պատմաբաններին ու արևելագետներին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել Հին աշխարհի և Միջին դարերի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության մասին: Դասընթացի ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն, այն ներկայացնում է միջազգային հարաբերությունների, դիվանագիտության և արտաքին քաղաքականության հիմունքները, պատմական տարբեր փուլերում դիվանագիտական գործունեությանը և դիվանագիտությանը տրված բնորոշումներն ու սահմանումները, դիվանագիտության, որպես միջազգային հարաբերությունների կարգավորման խաղաղ միջոցի, տեղն ու դերը արտաքին հարաբերությունների համակարգում, անհատի դերը միջազգային հարաբերություններում և դիվանագիտությունում և այլն:

Հին աշխարհի և միջին դարերի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը, ժամանակաշրջանի պատմական փորձի գնահատումը խիստ անհրաժեշտ է պատմական հետազոտական ժամանակաշրջաններն ուսումնասիրելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա.

1.1 Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության հին և միջին դարերի պատմությունը

1.2 Պատմության հին և միջին շրջանում միջպետական հարաբերությունների ձևավորման և զարգացման պատմությունը

1.2 Պատմական խոշոր անհատների դերի մասին դիվանագիտության մեջ:

2. կկարողանա ուսումնասիրել և հետազոտել.

2.1 Հին և միջին դարերի պատմական գործընթացները

2.2 Պետությունների արտաքին քաղաքականությունը, նրանց դերը միջազգային հարաբերություններում

2.3 Հին և միջին դարերի դիվանագիտական փաստաթղթերը և միջպետական պայմանագրերը

3. կսիրապետի.

3.1 Դիվանագիտության հիմունքներին

3.2 Դիվանագիտության հին և միջնադարյան մեթոդներին ու սկզբունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը
Հին Արևելքում – վերջնարդյունք՝ Հին աշխարհի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության իմացություն:

Թեմա 2՝ Հին Հունաստանի դիվանագիտությունը – վերջնարդյունք՝ Հին Հունաստանի միջազգային կապերի ձևերի իմացություն:

Թեմա 3՝ Հունական դիվանագիտությունը մակեդոնա-հելլենական շրջանում – վերջնարդյունք՝

Մակեդոնա-հելլենական ժամանակաշրջանի դիվանագիտության պատմության իմացություն:

Թեմա 4՝ Հին Հռոմի դիվանագիտությունը – վերջնարդյունք՝ Հին Հռոմի դիվանագիտության պատմության հիմնական իմացություն:

Թեմա 5՝ Հռոմեական դիվանագիտությունը կայսրության շրջանում – վերջնարդյունք՝

Կայսրության շրջանի հռոմեական դիվանագիտության պատմության իմացություն:

Թեմա 6՝ Բյուզանդիայի արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը – վերջնարդյունք՝

Բյուզանդական դիվանագիտության պատմության իմացություն:

Թեմա 7՝ Հին Ռուսիայի միջազգային կապերը և դիվանագիտությունը – վերջնարդյունք՝

Հին Ռուսիայի դիվանագիտության պատմության իմացություն – վերջնարդյունք՝

Հին Ռուսիայի դիվանագիտության պատմության իմացություն:

Թեմա 8՝ Միջազգային հարաբերությունները ավատատիրական միապետության ամրապնդման ժամանակաշրջանում – վերջնարդյունք՝

Ավատատիրական միապետության ամրապնդման ժամանակաշրջանի դիվանագիտության պատմության իմացություն:

Թեմա 9՝ Ֆրանսիայի դիվանագիտությունը – վերջնարդյունք՝

Ֆրանսիական դիվանագիտության հիմնական սկզբունքների իմացություն:

Թեմա 10՝ Իտալիայի դիվանագիտությունը – վերջնարդյունք՝ Իտալական դիվանագիտության հիմնական սկզբունքների

իմացություն: **Թեմա 11՝** Մոսկովյան պետության արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը – վերջնարդյունք՝ Մոսկովյան պետության դիվանագիտության հիմնական սկզբունքների իմացություն: **Թեմա 12՝** Եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության և դիվանագիտության բնույթը և բնորոշ գծերը 16-րդ դարում – վերջնարդյունք՝ Եվրոպական պետությունների արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնական սկզբունքների իմացություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M02. Քաղաքակրթությունների տեսություն և պատմություն (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Պատմության քաղաքակրթական ըմբռնման առանձնահատկությունների, քաղաքակրթությունների տիպաբանության և դասակարգման, արդի քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային գործընթացներում քաղաքակրթությունների տեղի և դերի ուսումնասիրությունը ներկայումս կարևոր տեղ է զբաղում պատմագիտության, փիլիսոփայության, սոցիոլոգիայի և հասարակագիտության մյուս բնագավառներում: Դասընթացը նպատակ ունի ներկայացնելու քաղաքակրթությունների մասին անցյալի և արդի տեսությունները, հասարակական մտքի զարգացման միտումները, արժեքային համակարգերը: Ներկայացնելով համաշխարհային պատմությունն իբրև քաղաքակրթությունների պատմություն, դասընթացը հնարավորություն է տալիս գնահատել պատմական գործընթացները մարդ-հասարակություն բարդ փոխհարաբերությունների համատեքստում, ներկայացնելու երկրների և ժողովուրդների պատմությունը համեմատության մեջ, վերլուծելու մարդկության գլոբալ հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում, ինչպես նաև արժևորելու անցյալի փորձն ու ձեռքբերումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա

- քաղաքակրթությունների ընդհանուր բնութագիրը և հիմնական բնորոշումները
- քաղաքակրթությունների մասին տեսությունները և հայեցակարգային մոտեցումները
- քաղաքակրթությունների դասակարգման և տիպաբանության չափորոշիչները

- անցյալի և արդի քաղաքակրթությունների զարգացման օրինաչափությունները

2. կկարողանա

- ներկայացնել քաղաքակրթությունների առանձնահատկություններն ու ընդհանուր գծերը
- հասկանալ պատմության քաղաքակրթական մոտեցման բազմազիծ և միազիծ տարբերակները
- գնահատել ինտեգրացիոն գործընթացները քաղաքակրթական համակարգերի ներսում և նրանց միջև

3. կտիրապետի

- հմտության՝ վերլուծելու մարդկության գլոբալ հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում, դրանք ներկայացնել քաղաքակրթությունների բախման և քաղաքակրթությունների երկխոսության համատեքստում
- կարողության՝ գնահատելու քաղաքակրթական ինքնության գործոնի դերը երկրների արտաքին և ներքին քաղաքականության մեջ, հասարակական և սոցիալական կյանքում, ազգերի հոգևոր-մշակութային գերակայություններում
- կարողության՝ ինքնուրույն մեկնաբանելու և գնահատելու քաղաքակրթությունների մասին տեսությունները, նշանավոր տեսաբանների հայեցակարգերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Քաղաքակրթությունների ընդհանուր բնութագիրը – վերջնարդյունք՝ «Քաղաքակրթություն» հասկացության և պատմության քաղաքակրթական մոտեցման տարբերակների յուրացում: **Թեմա 2՝** Քաղաքակրթությունների մասին տեսությունները – վերջնարդյունք՝ Ծանոթացում քաղաքակրթությունների հայտնի տեսաբանների հայեցակարգերի հետ: Հարավային Անդրկովկասը Խորհրդային Միության կազմում: **Թեմա 3՝** Դասական Արևելքի քաղաքակրթություններ – վերջնարդյունք՝ Դասական Արևելքի քաղաքակրթությունների առանձնահատկությունների յուրացում: **Թեմա 4՝** Միջնադարյան քաղաքակրթություններ – վերջնարդյունք՝ Միջնադարյան քաղաքակրթությունների, որպես արևելյան տիպի քաղաքակրթություններ, տիպաբանության գնահատում: **Թեմա 5՝** Անտիկ (հունահռոմեական) քաղաքակրթություն – վերջնարդյունք՝ Անտիկ քաղաքակրթության դերի վերհանում եվրոպական քաղաքակրթության հաստատման համատեքստում: **Թեմա 6՝** Արդի արևմտյան քաղաքակրթություն – վերջնարդյունք՝ Արդի արևմտյան քաղաքակրթության հիմնական բնութագր իվերլուծություն: **Թեմա 7՝** Աշխարհը արդի փուլում – վերջնարդյունք՝ Ժամանակակից աշխարհում

համամարդկային, գլոբալ հիմնախնդիրների և ինտեգրացիոն գործընթացների վերլուծություն: **Թեմա 8՝** Ոչ արևմտյան քաղաքակրթությունների մոդեռնիզացիան – վերջնարդյունք՝ Ոչ արևմտյան և արևմտյան քաղաքակրթությունների փոխհարաբերությունների բնույթի ընկալում քաղաքակրթությունների բախման և երկխոսության համատեքստում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M03. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության հիմնահարցեր (նոր շրջան) (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել համաշխարհային պատմության Նոր ժամանակների /17-րդ դար – 1918թ./ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության մասին: Դասընթացի ուսումնասիրությունն ունի կարևոր նշանաություն: Այն ներկայացնում է պատմության նոր ժամանակներում պետությունների վարած արտաքին քաղաքականությունը, միջազգային հարաբերությունների համակարգերի ձևավորումը և փլուզումը, անհատի դերը միջազգային հարաբերություններում և դիվանագիտությունում, ճանաչված դիվանագետների և քաղաքական գործիչների դիվանագիտական գործունեությունը և այլն:

Նոր ժամանակների միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը, պատմական փորձի գնահատականը խիստ անհրաժեշտ է համաշխարհային պատմության այդ ժամանակաշրջանն օբյեկտիվ բնութագրելու համար: Նոր ժամանակներում տեղի էր ունենում միջազգային կապերի, դիվանագիտության, դիվանագիտական մեթոդների, դիվանագիտական ապարատի կատարելագործման, միջազգային նոր համակարգերի ձևավորման և տրոհման գործընթացը:

Նոր ժամանակների միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը անհրաժեշտ է նաև դրան հաջորդած նորագույն շրջանի, նաև ներկայիս միջազգային հարաբերությունները և իրադրությունը ճիշտ ընկալելու և գնահատելու, հետևություններ անելու տեսանկյունից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա

- միջազգային հարաբերությունների և դիվանագիտության նոր շրջանի պատմությունը,

- պատմության նոր ժամանակների միջպետական հարաբերությունների ձևավորման և զարգացման պատմությունը,

- դիվանագիտության տեղն ու դերը նոր ժամանակների միջազգային հարաբերություններում:

2. կհասկանա

- նոր ժամանակների պատմական գործընթացները, պետությունների դերը միջազգային հարաբերությունների պատմականորեն ձևավորվող համակարգերում,

արժևորել՝

- նոր ժամանակների միջազգային դրությունը:

3. կտիրապետի

- նոր ժամանակների միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմությանը

- նոր ժամանակների պատմական խոշոր անհատների դերին միջազգային հարաբերություններում

- նոր ժամանակների միջպետական և միջազգային պայմանագրերին

- տարբեր երկրների դերին միջազգային հարաբերությունների ձևավորման գործընթացում

- դիվանագիտության նոր ժամանակների մեթոդներին և սկզբունքներին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային հարաբերությունների Վեստֆալյան համակարգի ձևավորումը և հիմնական սկզբունքները – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերությունների Վեստֆալյան համակարգի հիմնական սկզբունքների իմացություն: **Թեմա 2՝** Մոսկովյան պետության միջազգային դրությունը և դիվանագիտությունը 17-րդ դարում – վերջնարդյունք՝ 17-րդ դարի միջազգային հարաբերություններում Մոսկովյան պետության միջազգային դրության իմացություն: **Թեմա 3՝** Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և դիվանագիտությունը 18-րդ դարում – վերջնարդյունք՝ 18-րդ դարում Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների իմացություն: **Թեմա 4՝** ԱՄՆ

դիվանագիտությունը 18-րդ դարում – վերջնարդյունք՝ 18-րդ դարում ԱՄՆ արտաքին քաղաքականության և դիվանագիտության իմացություն: **Թեմա 5՝** Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը ֆրանսիական բուրժուական հեղափոխության տարիներին – վերջնարդյունք՝ Ֆրանսիական հեղափոխության ազդեցության ներքո 18-րդ դարի վերջի միջազգային դրության իմացություն: **Թեմա 6՝** Եվրոպական դիվանագիտությունը նապոլեոնյան պատերազմների շրջանում – վերջնարդյունք՝ Նապոլեոն Բոնապարտի դիվանագիտության և 19-րդ դարի սկզբի միջազգային հարաբերությունների իմացություն: **Թեմա 7՝** Միջազգային հարաբերությունների Վիեննայի համակարգի ձևավորումը – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերությունների Վիեննայի համակարգի հիմնական սկզբունքների իմացություն: **Թեմա 8՝** Միջազգային հարաբերությունները և դիվանագիտությունը 19-րդ դարի 1-ին կեսին: Արևելյան հարցը – վերջնարդյունք՝ Արևելյան հարցի էության, 19-րդ դարի 1-ին կեսի միջազգային հարաբերություններում նրա դերի իմացություն: **Թեմա 9՝** Արևելյան հարցը 19-րդ դարի 2-րդ կեսի միջազգային հարաբերություններում – վերջնարդյունք՝ 19-րդ դարի 2-րդ կեսի միջազգային հարաբերություններում Արևելյան հարցի դերի իմացություն: **Թեմա 10՝** Գերմանիայի միավորման խնդիրը /1864-1871թթ. / – վերջնարդյունք՝ Գերմանիայի միավորման միջազգային գործընթացի, դրանում Օ. Բիսմարկի դիվանագիտության իմացություն: **Թեմա 11՝** ԱՄՆ արտաքին քաղաքականությունը և դիվանագիտությունը 19-րդ դարում – վերջնարդյունք՝ 19-րդ դարում ԱՄՆ արտաքին քաղաքականության և դիվանագիտության իմացություն: **Թեմա 12՝** Միջազգային հարաբերությունները Եռյակ Միության և Անտանտի կազմավորման շրջանում – վերջնարդյունք՝ 19-րդ դարի վերջի միջազգային հարաբերությունների իմացություն: **Թեմա 13՝** Դիվանագիտությունը Առաջին աշխարհամարտի տարիներին /1914-1918թթ. / – վերջնարդյունք՝ Առաջին աշխարհամարտի տարիների դիվանագիտության պատմության իմացություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M05. Մփյուռքի պատմություն(3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Արդի գլոբալացվող աշխարհում առավել քան կարևոր է պատմաքաղաքական, տնտեսական, մշակութային, կրոնական, ինչպես նաև

անձնական հանգամանքների բերումով աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի մի գերակշիռ հատվածի՝ գաղթականության ու նրա հիմնած գաղթավայրերի, ապա նաև՝ հայ սփյուռքի պատմության համակողմանի ուսումնասիրումը, առանց որի թերի կլիներ հայոց պատմության ամբողջական լուսաբանումը: Հայ սփյուռքի պատմությունը հայ ժողովրդի պատմության անբաժանելի, ինչպես նաև՝ համաշխարհային պատմական ու քաղաքակրթական ժառանգության բաղկացուցիչ մասն է կազմում: Ուստի, պատմական ստիպողական հանգամանքների բերումով օտար երկրներում հայտնված հայության արտասահմանյան պատմության ողջ շղթայի հետազոտման և ամբողջացման անհրաժեշտությունից ելնելով, առավել քան կարևոր ու առաջնահերթ է Հայ սփյուռքի սկզբնավորման ու զարգացման պատմության համակողմանի ուսումնասիրումը: Այն առանձնապես արդիական է նաև այսօր, երբ համաշխարհային քաղաքական, տնտեսական, սոցիալական ու մշակութային գործընթացների հետևանքով Հայաստանի Հանրապետությունը և նրա քաղաքացիները, ինչպես պետական, դիվանագիտական, ընկերային, տնտեսական, մշակութային, նույնպես և անհատական հանգամանքների բերումով անմիջական հարաբերություններ են ունենում աշխարհի տարբեր երկրների համապատասխան կառույցների (հիմնականում տեղ հայ համայնքի միջոցով), ինչպես նաև արտերկրում հաստատված հայկական տարաբնույթ համայնքային հաստատությունների կամ անհատ հայերի հետ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա Դասընթացը անցնելուց հետո ուսանողները կիմանան հայ սփյուռքի ձևավորման և զարգացման պատմության, հետազոտվող ժամանակաշրջանում (1915-մեր օրերը) հայրենիք-սփյուռք առնչությունների, տարբեր երկրների հայ համայնքների առանձնահատկությունների և ընդհանրությունների, ներհամայնքային, ինչպես նաև համասփյուռքյան ազգային կառույցների, դիմագրաված խնդիրների և հարակից այլ հարցերի մասին:**2. կկարողանա.**

1. Ճանաչել արդի հայ սփյուռքն ինչպես որ կա՝ իր ընդհանրություններով ու տարբերություններով, ավանդական ու համաշխարհայինացված յուրահատկություններով,

2. Ուսումնասիրել և հետազոտել սփյուռքի այս կամ այն համայնքի պատմությունը (գաղթականությունից մինչև համայնքային կառույցների ստեղծում),

3. Բացահայտել ավանդական կուսակցությունների դիրքորոշումը Հայաստանի, ինչպես նաև՝ հայրենադարձության նկատմամբ, սփյուռք-Հայաստան հարաբերությունների առանձնահատկությունները պատմական տարբեր շրջափուլերում,

4. Ուրվագծել սփյուռքը հեռանկարում և դրա տեղն ու դերը Հայաստանի ռազմավարական շահերի համատեքստում:

3. կտիրապետի.

1. Հայ սփյուռքի լեզվամտածողական, պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական առանձնահատկություններին արևմուտքի, արևելքի և նախկին ԽՍՀՄ տարածքի երկրներում,

2. Հայրենիք-սփյուռք առնչությունների պատմաքաղաքական առանձնահատկություններին,

3. Հայ ավանդական կուսակցությունների դերին սփյուռքում ազգային ինքնության պահպանմանն ուղղված ջանքերում,

4. Ազգային ինքնության հիմնահարցերին և հայապահպանման հեռանկարին հայ սփյուռքում առկա նախորդող շերտերի սերնդափոխությունների օրինակով:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայ սփյուռքի պատմությունը Հայոց և համաշխարհային պատմության համատեքստում – վերջնարդյունք՝ Հայ սփյուռքը համաշխարհային գործընթացներում: **Թեմա 2՝** Ա. Հայ սփյուռք հասկացությունը, Բ. Հայ սփյուռք երևույթը – վերջնարդյունք՝ Սահմանումների յուրացում: **Թեմա 3՝** Ա. Հայ սփյուռքի պատմության ուսումնասիրվածության աստիճանը, Բ. Առկա սփյուռքագիտական գրականությունը – վերջնարդյունք՝ Ծանոթացում առկա մասնագիտական գրականությանը: **Թեմա 4՝** Ա. Հայկական արտագաղթերը, Բ. Փուլային նկարագրություն – վերջնարդյունք՝ Արտագաղթերի պատճառների յուրացում: **Թեմա 5՝** Ա. Ներհոսքը դեպի Արևելյան Հայաստան, Բ. Հայրենադարձության փուլերը – վերջնարդյունք՝ Ներգաղթի պատճառների յուրացում: **Թեմա 6՝** Ա. Գաղութ-բնօրրան հարաբերություններ, Բ. Սփյուռք-Հայաստան առնչություններ – վերջնարդյունք՝ Փոխհարաբերությունների բնույթի ընկալում: **Թեմա 7՝** Ա. Ազգային ինքնության հիմնահարցեր, Բ. Սերնդափոխության հարցեր – վերջնարդյունք՝ Ինքնության տարրերի վերլուծություն: **Թեմա 8՝** Ա. Հայ սփյուռքի կազմակերպական կառուցվածքը, Բ. Կազմակերպություններ, միություններ, կուսակցություններ – վերջնարդյունք՝ Կառուցվածքի յուրացում: **Թեմա 9՝** Ա. Հայ սփյուռքը միջազգային հարաբերությունների համատեքստում, Բ. Լոբբիստական գործունեություն – վերջնարդյունք՝ Սփյուռքի միջազգային դերակատարման վերհանում: **Թեմա 10՝** Ա. Հայ սփյուռքի ռազմավարությունը Հայաստանի նկատմամբ, Բ. Արդի մոտեցումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M06. Բանակցություններ վարելու և ժեստերի արվեստ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Միջազգային հարաբերություններում և ազատ շուկայական հարաբերությունների ուղով զարգացող գործարար աշխարհում առավել շատ են կարևորվում անձի հաղորդակցման ունակությունների և հմտությունների

ձևավորման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրությունները: Ժամանակակից աշխարհում՝ այդ թվում նաև Հայաստանում, անձի հաղորդակցման հմտությունները և մասնավորապես բանակցություններ վարելու արվեստը հանդիսանում են աշխատանքի ընդունման, աշխատանքի բարձր արդյունավետության, պետական կառույցի կամ կազմակերպության վարկանիշի և շահութաբերության աճի կարևոր նախապայմաններից մեկը: Բանակցությունների էության, տեսակների, մարտավարությունների վերաբերյալ գիտելիքները օգտակար են ոչ միայն միջազգային հարաբերություններում և գործարար հաղորդակցության ժամանակ, այլև անձնական և ընտանեկան կյանքում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա.

Դասընթացը անցնելուց հետո ուսանողները կիմանան բանակցությունների տեսակները և դրանցում օգտագործվող հիմնական մարտավարությունները, բանակցային գործընթացին նախապատրաստվելու առանձնահատկությունները և կծանոթանան տարբեր ազգերին բնորոշ բանակցություններ վարելու ազգային ձևերի առանձնահատկություններին և տարբերություններին:

2. կկարողանա.

- օգտագործել ստացված գիտելիքները գրուցակցի կողմից մանիպուլյացիաներից զերծ մնալու, նրա հնարավոր քայլերը կանխորոշելու և ճիշտ բանակցային մեթոդ կիրառելու համար,
- տարբեր ազգերի ներկայացուցիչների հետ բանակցությունների ընթացքում կիրառել ստացված գիտելիքները առավել շահավետ արդյունք ստանալու համար,
- ստեղծել ճիշտ աշխատանքային նկարագիր (ռեզյումե) և կիրառել հարցազրույցների ընթացքում ճիշտ պահելակերպի կանոնները,
- առավել արդյունավետ կառավարել իր ժամանակը և հմտորեն լուծել աշխատանքային միջավայրում առաջացած կոնֆլիկտները:

3. կտիրապետի.

– կտիրապետեն միջազգային և գործարար հարաբերություններում հաղորդակցության ու բանակցություններ վարելու հիմնական ունակություններին և հմտություններին

– կտիրապետեն նաև բանակցություններին արդյունավետ նախապատրաստվելու հմտություններին, կբացահայտեն բանակցություններին նախապատրաստվելու եւ վարելու փուլերը ու դրանց հերթականությունը,

– կտիրապետեն ոչ խոսքային և խոսքային հաղորդակցման հմտություններին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Բանակցությունների էությունը և տեսակները – վերջնարդյունք՝ Ուսանողները կտիրապետեն բանակցությունների էությանը և տեսակներին: **Թեմա 2՝** Նախապատրաստությունը բանակցություններին – վերջնարդյունք՝ նախապատրաստվել բանակցություններին: **Թեմա 3՝** Բանակցությունների վարում

– վերջնարդյունք՝ Ուսանողները կտիրապետեն բանակցություններ վարելու հմտություններին: **Թեմա 4** Բանակցությունների ռազմավարությունը, մարտավարությունը և տեխնոլոգիան – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերություններում և մասնավորապես բիզնես ոլորտում առավել տարածված բանակցային ռազմավարությունները և տեխնոլոգիաները: **Թեմա 5** Բանակցություններ վարելու ազգային ձևերը – վերջնարդյունք՝ Կտիրապետեն տարբեր ազի ներկայացուցիչների բանակցություններ վարելու առանձնահատկություններին: **Թեմա 6** Հեռախոսային, էլեկտրոնային և ինտենետ բանակցություններ – վերջնարդյունք՝ Ինչպես ճիշտ օգտագործել ինտերնետային միջոցները բանակցությունների ընթացքում: **Թեմա 7** Ոչ խոսքային և խոսքային հաղորդակցման միջոցներ – վերջնարդյունք՝ Կտիրապետեն ժեստերի լեզվին: **Թեմա 8** Կոնֆլիկտների հոգեբանություն, ժամանակի կառավարում – վերջնարդյունք՝ Կհասկանան կոնֆլիկտների առաջացման պատճառները, ինչպես նաև կտիրապետեն ժամանակի արդյունավետ օգտագործման մեթոդներին: **Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.**

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M07.Աշխարհաքաղաքականություն (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ծանոթացնել ուսանողներին աշխարհաքաղաքականության՝ որպես գիտության առանձին ճյուղի հիմնական հայեցակարգային ուղղություններին, ժամանակակից գլոբալացվող աշխարհում աշխարհաքաղաքական մտքի առանցքային հիմնախնդիրներին ու մարտահրավերներին, ինչպես նաև ներկայացնել համաշխարհային քաղաքական ու սոցիալ տնտեսական զարգացումների արդի փուլում աշխարհաքաղաքական վերլուծության դերն ու կարևորությունը:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա.

- աշխարհաքաղաքականության՝ որպես գիտության առանձին ճյուղի հիմնական հայեցակարգային ուղղությունները,

- աշխարհաքաղաքականության հիմնական տեսությունների և ուղղությունների առանցքային գաղափարական մոտեցումները,

- համաշխարհային քաղաքական ու սոցիալ տնտեսական զարգացումների արդի փուլում աշխարհաքաղաքական վերլուծության դերն ու կարևորությունը

2. կկարողանա

ուսումնասիրել և հետազոտել՝

- աշխարհաքաղաքական գիտական ուղղության ձևավորման նախադրյալները

- գնահատել աշխարհաքաղաքական հիմնական տեսությունների և հայեցակարգերի դերն ու նշանակությունը գլոբալ գործընթացների վրա

- աշխարհաքաղաքական գործընթացների արդի զարգացումների վերաբերյալ կատարել ինքնուրույն վերլուծություն և ներկայացնել մոտեցումներ բացահայտել՝

- աշխարհաքաղաքական գործոնների ազդեցությունը միջազգային հարաբերություններում առաջնահերթությունների ձևավորման գործում:

3. կտիրապետի.

- աշխարհաքաղաքականության հետազոտման մեթոդներին

- աշխարհաքաղաքական առանձին գործընթացների արդյունքների կանխատեսմանը

- աշխարհաքաղաքական հիմնական հայեցակարգերին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Աշխարհաքաղաքականությունը՝ որպես գիտության առանձին ճյուղ – վերջնարդյունք՝ տիրապետում թեմայի հայեցակարգային ուղղություններին:

Թեմա 2՝ Աշխարհաքաղաքականության բնորոշումը, գործառույթները, մեթոդները, կատեգորիաները ու հիմնական օրենքները – վերջնարդյունք՝ տիրապետում թեմայի հիմնական տեսությունների առանցքային մոտեցումներին: **Թեմա 3՝**

Աշխարհաքաղաքականության կայացումը և դասական աշխարհաքաղաքականության գաղափարական հենքը – վերջնարդյունք՝ տիրապետում թեմայի հիմնական գաղափարական ուղղությունների առանցքային մոտեցումներին: **Թեմա 4՝** Ատլանտիզմը՝ որպես աշխարհաքաղաքական ուղղություն – վերջնարդյունք՝ տիրապետում թեմայի հիմնական հայեցակարգերին:

Թեմա 5՝ Մոնդիալիզմը՝ որպես աշխարհաքաղաքականության առանցքային ուղղություն – վերջնարդյունք՝ տիրապետում թեմայի առանցքային ուղղություններին: **Թեմա 6՝** <<Նոր աջերի>> աշխարհաքաղաքականությունը – վերջնարդյունք՝ տիրապետում թեմայի առանցքային մոտեցումներին: **Թեմա 7՝**

Ժամանակակից աշխարհաքաղաքականության դպրոցները – վերջնարդյունք՝ Տիրապետում տեսությունների և հայեցակարգերի դերն ու նշանակությունը գլոբալ գործընթացների վրա: **Թեմա 8՝** Աշխարհաքաղաքական գործընթացները համաշխարհային զարգացման արդի փուլում և մեծ տերությունների գեոստրատեգիան – վերջնարդյունք՝ տիրապետում աշխարհաքաղաքական վերլուծության դերին ու կարևորությանը

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M08. Դիվանագիտական և հյուպատոսական ծառայություն և իրավունք (4 կրեդիտ)

Շաբաթական 3 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացը ներառում է դիվանագիտական և հյուպատոսական ծառայության կարևորագույն խնդիրները, դիվանագիտության առանձնահատկությունները, դիվանագետների պատասխանատու առաքելության հիմնական իրավունքներն ու պարտականությունները:

Դասավանդման ընթացքում կիրառվում է համեմատական սկզբունը, ինչպես միջազգային փորձի ու տվյալ բնագավառում ՀՀ ձեռք բերած նվաճումները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա

– դիվանագիտական և հյուպատոսական ծառայության հիմնական փուլերը և արդի խնդիրները

2. կկարողանա

– համապարփակ ներկայացնել դիվանագիտական և հյուպատոսական ծառայության առանձնահատկություններն ու իրավունքի զարգացման փուլերը

3. կսիրապետի

– Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ծառայության գործառնություններն ու դրա իրավասությունները:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դիվանագիտության և դիվանագիտական ծառայության էությունը – վերջնարդյունք՝ Խորապես ընկալել դիվանագիտության և դիվանագիտական ծառայության էությունը: **Թեմա 2՝** Դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի հասկացությունը և դրա աղբյուրները – վերջնարդյունք՝ Յուրացնել դիվանագիտական և հյուպատոսական իրավունքի սահմանումը՝ խմբավորելով դրանց աղբյուրները: **Թեմա 3՝** Արտաքին հարաբերությունների պետական մարմինները, դրանց ձևերը, խմբերն ու տեսակները – վերջնարդյունք՝ Լիարժեք գաղափար կազմել արտաքին հարաբերությունների, պետական մարմինների մասին: **Թեմա 4՝** Պետությունների միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատումը, դիվանագիտական ներկայացուցչությունների տեսակները, դրանց հիմնումն ու գործունեության դադարեցումը, ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության խնդիրները – վերջնարդյունք՝ Պատկերացում կազմել դիվանագիտական հարաբերությունների հաստատման համար անհրաժեշտ գործոնների մասին, հասկանալ դեսպանությունների մշտական ներկայացուցիչների և հյուպատոսությունների տարբերությունները, իմանալ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների խնդիրները: **Թեմա 5՝**

Դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարը, նրա նշանակման կարգը, իր պարտականությունների կատարմանն անցնելու սկիզբը և առաքելության ավարտը – վերջնարդյունք՝ Համապարփակ ծանոթանալ դիվանագիտական ներկայացուցչության ղեկավարի նշանակման իր պարտականությունների կատարմանն անցնելու և առաքելության ավարտի կարգին: **Թեմա 6՝** Դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմը և կառուցվածքը, դիվանագիտական կորպուս, դուայեն: ՀՀ դիվանագիտական պաշտոնները, դրանց դասակարգումը, ՀՀ դիվանագիտական աստիճանները, դրանց շնորհման կարգն ու ժամկետները: ՀՀ դիվանագիտական ծառայության մարմինները, ՀՀ ԱԳՆ գործառույթները, ղեկավարումը և կառուցվածքը – վերջնարդյունք՝ Իմանալ դիվանագիտական ներկայացուցչությունների անձնակազմը և կառուցվածքը ՀՀ դիվանագիտական պաշտոններն ու դիվանագիտական աստիճանները, դրանց դասակարգումը, դիվանագիտական ծառայության մարմինները: **Թեմա 7՝** Դիվանագիտական ծառայության կենտրոնական մարմինները Ֆրանսիայում, Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, ՌԴ-ում – վերջնարդյունք՝ Պատկերացում ունենալ նշյալ երկրների դիվանագիտական ծառայության կենտրոնական մարմինների մասին: **Թեմա 8՝** Դիվանագիտական և հյուպատոսական անձեռնմխելիություններ և արտոնություններ – վերջնարդյունք՝ Համապարփակ ծանոթանալ դիվանագիտական և հյուպատոսական անձեռնմխելիություններին, ինչպես նաև դրանց տարբերություններին: **Թեմա 9՝** Դեսպանընկալ պետությունում դիվանագիտական անձնակազմի գործունեության հիմնական ձևերը՝ կապերի հաստատում, տեղեկատվական գործունեություն, գործնական և անձնական հանդիպումներ և զրույցներ – վերջնարդյունք՝ Խորապես ծանոթանալ դեսպանընկալ պետությունում դիվանագիտական անձնակազմի գործունեության հիմնական ձևերին: **Թեմա 10՝** Դիվանագիտական գրագրության ձևերը և կազմումը – վերջնարդյունք՝ Իմանալ դիվանագիտական ձևերը և սովորել դրանք կազմել: **Թեմա 11՝** ՀՀ-ում դիվանագիտական պաշտոնին նշանակվելու կարգը և դիվանագիտական ծառայության անցնելու ընթացքը: ՀՀ դիվանագիտական անձնագրեր, դրանց կրելու իրավունք ունեցող անձինք, դիվանագիտական անձնագրեր տալու և հետ վերցնելու կարգը – վերջնարդյունք՝ Խորապես ծանոթանալ ՀՀ դիվանագիտական ծառայության մասին օրենքին և այն ներկայացնել: **Թեմա 12՝** Հյուպատոսական հարաբերությունների հաստատում: Հյուպատոսների և հյուպատոսական հիմնարկների տեսակները, հյուպատոսական տարածաշրջան հասկացությունը, ՀՀ հյուպատոսական հիմնարկի ստեղծումը և լուծարումը: Հյուպատոսական հիմնարկի անձնակազմը, հիմնարկի ղեկավարի նշանակման և իր պարտականություններին անցնելու կարգը: ՀՀ հյուպատոսական հիմնարկների ինդիքները, պարտականությունները և գործառույթները – վերջնարդյունք՝ Համակողմանի ուսումնասիրել ՀՀ հյուպատոսական ծառայության մասին օրենքը և այն ներկայացնել: **Թեմա 13՝** ՀՀ “Պետական արարողակարգի ծառայություն” գործակալության կառուցվածքն ու հիմնական գործառույթները: Բարձր մակարդակի այցերի տեսակները – վերջնարդյունք՝ Մանրամասնորեն

ծանոթանալ Պետական արարողակարգի ծառայության գործակալության կառուցվածքին ու հիմնական գործառույթներին: Իմանալ պետական, պաշտոնական և այլ այցերի առանձնահատկություններն ու տարբերությունները::

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M09. ՀՀ միջազգային դրությունը և արտաքին քաղաքականությունը (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսանողներին ծանոթացնել Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությանը, միջազգային ասպարեզում Հայաստանի դիրքորոշումներին, միջազգային կազմակերպություններում և գործընթացներում ներգրավվածությանը, բարեկամ և գործընկեր երկրների հետ համագործակցությանը, տարածաշրջանային խնդիրների կարգավորման ասպարեզում ՀՀ դիրքորոշմանը: Այս ամենի արդյունքում՝ սովորողները անհրաժեշտ գիտելիքներ կստանան և հմտություններ ձեռք կբերեն ՀՀ արտաքին քաղաքականությանն առնչվող խնդիրների և արդի աշխարհաքաղաքական զարգացումների վերաբերյալ արդյունավետ վերլուծություն կատարելու համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա.

-ՀՀ արտաքին քաղաքականությունն իրականացնող մարմինների գործառույթները;

- ՀՀ արտաքին քաղաքական գործունեության հիմնական ուղղություններն ու գլխավոր սկզբունքները:

2. կկարողանա.

- ուսումնասիրել ՀՀ և եվրոպական ու տարածաշրջանային կառույցների միջև ձևավորվող ուղղություններն ու հիմնական առանձնահատկությունները;

- ուսումնասիրել ՀՀ արտաքին քաղաքական, տնտեսական և մշակութային հարաբերություններն աշխարհի կարևորագույն պետությունների և հարևան երկրների հետ:

3. կտիրապետի.

- ՀՀ տեղին ու դերին միջազգային հարաբերությունների ոլորտում և տարածաշրջանային գործընթացներում;

- ՀՀ արտաքին քաղաքականության մոտեցումների, ռազմավարական և մարտավարական խնդիրներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի նպատակը և խնդիրները: Աղբյուրների և գրականության տեսություն – վերջնարդյունք՝ Դասընթացի նպատակների և աղբյուրագիտական բազայի իմացություն և ներկայացում: **Թեմա 2՝** ՀՀ ՀՌԶԱԿՈՒՄԸ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ Հայաստանի արտաքին կապերը անկախության նախօրեին: Հայաստանի անկախացման գործընթացի մեկնարկը, Հայաստանի անկախության հանրաքվեն: ՀՀ արտաքին գործերի նախարարության կառուցվածքը, գործառույթները – վերջնարդյունք՝ մեկնաբանել ՀՀ հռչակման և հանրապետության արտաքին քաղաքականության սկզբունքներին վերաբերող խնդիրները: **Թեմա 3՝** ՀՀ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ անդամակցությունը միջազգային կազմակերպություններին: ՀՀ գործակցությունը ՄԱԿ-ի շրջանակներում: ՀՀ համագործակցությունը ԱՊՀ, ՀԱՊԿ, ԵԱՏՄ շրջանակներում: ՀՀ հարաբերությունները Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության հետ – վերջնարդյունք՝ վերլուծել ՀՀ և միջազգային կազմակերպությունների փոխգործակցության ընթացքը: **Թեմա 4՝** ՀՀ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ ՀՀ հարաբերությունները ԵՄ-ի և ԵՄ-ի հետ: ՀՀ համագործակցությունը ՆԱՏՕ-ի հետ – վերջնարդյունք՝ մեկնաբանել եվրոպական կառույցների հետ ՀՀ փոխգործակցությունը և ներկայացնել հանրագումարները: **Թեմա 5** ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Արցախյան հիմնախնդիրն արդի փուլում: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի արդի փուլը – վերջնարդյունք՝ վերլուծել Արցախյան հիմնախնդրի կարգավորման և Հայոց ցեղասպանության ճանաչման գործում ՀՀ արտաքին քաղաքականությունը: **Թեմա 6** ՀՀ ԵՐԿԿՈՂՄ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՐԵՎԱՆ ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ Հարաբերությունների հաստատման գործընթացը, գործակցությունը, եղած և առկա խնդիրներն ու ձեռքբերումները – վերջնարդյունք՝ վերլուծել հարևան և հեռավոր պետությունների հետ ՀՀ երկկողմ հարաբերությունները, առկա խնդիրներն ու ձեռքբերումները:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M10. Միջազգային հարաբերությունների ժամանակակից համակարգը և տեսությունները (4 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

միջազգային հարաբերությունների ոլորտում մասնագիտացող մագիստրանտներին ներկայացնել «միջազգային հարաբերությունների համակարգ» հասկացությունը, միջազգային հարաբերությունների համակարգային վերլուծության կարևորությունը, վերհանել միջազգային հարաբերությունների արդի համակարգի էությունը, առանձնահատկություններն ու զարգացման հեռանկարները:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. Կիմանա.

միջազգային համակարգերի պատմական զարգացման և փոփոխման օրինաչափությունները, միջազգային հարաբերությունների կառուցվածքային առանձնահատկություններն արդի աշխարհում, համաշխարհային տնտեսական զարգացման միտումները և դրանց ազդեցությունն արդի միջազգային հարաբերությունների վրա,

2. Կկարողանա ուսումնասիրել և հետազոտել.

ուսումնասիրել և հետազոտել ուժի գործոնը ժամանակակից միջազգային հարաբերություններում, արդի միջազգային հարաբերությունների իրավաքաղաքական համակարգը, համամարդկային հիմնախնդիրները ժամանակակից աշխարհում, միջազգային հարաբերությունների ժամանակակից տեսությունները, արժևորել ուժի գործոնի, տնտեսական հարաբերությունների և իրավական ռեժիմի նշանակությունն արդի միջազգային հարաբերություններում, գիտական հետազոտություն կատարել դասընթացի շրջանակներում,

3. կտիրապետի.

«միջազգային հարաբերությունների համակարգ» հասկացության սահմանմանը, միջազգային հարաբերությունների կառուցվածքային առանձնահատկություններին արդի աշխարհում, համաշխարհային տնտեսական զարգացման միտումներին, արդի միջազգային հարաբերությունների և համամարդկային հիմնախնդիրներին ժամանակակից աշխարհում:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Դասընթացի նպատակը և խնդիրները: Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի միջազգային իրադրության ընդհանուր բնութագիրը – վերջնարդյունք՝ Կարողանալ բնութագրել հետսառըպատերազմյան ժամանակաշրջանի միջազգային իրադրությունը: **Թեմա 2՝** «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ» ՀԱՄԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ Միջազգային համակարգ. հասկացության սահմանումը, տիպերը և կառուցվածքը: Միջազգային համակարգերի պատմական զարգացման և փոփոխման օրինաչափությունները: Միջազգային հարաբերությունների համակարգի միջավայրը – վերջնարդյունք՝ Կարողանալ սահմանել «միջազգային հարաբերությունների համակարգ» հասկացությունը և բնութագրել համակարգի ներքին ու արտաքին միջավայրը, թվարկել համակարգերի տիպեր, բնութագրել դրանց կառուցվածքը, իմանալ միջազգային հարաբերությունների համակարգերի պատմական զարգացման և փոփոխման օրինաչափությունների մասին: **Թեմա 3** ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ

ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀՈՒՄ Միջազգային հարաբերությունների գեոտնտեսական և գեոազմավարական կառուցվածքը: Երեք «աշխարհները»: Միջազգային հարաբերությունների կառուցվածքային զարգացման փուլերը: Բևեռայնության խնդիրը միջազգային հարաբերություններում: Հեգեմոն պետության գաղափարը միջազգային հարաբերություններում ԱՄՆ-ի օրինակով: Պետությունների քաղաքական համակարգերը և դրանց բովանդակությունը: Ցանցային աշխարհի գաղափարը: Համաշխարհային քաղաքական կառուցվածքի ձևավորման սցենարները: Քաղաքական ռեժիմները ժամանակակից աշխարհում: «Գլոբալ ժողովրդավարական ալիք» հասկացությունը և դրա տարատեսակները: Ժողովրդավարական աշխարհի տեսությունը: Ավտորիտար պետությունները ժամանակակից աշխարհում – վերջնարդյունք՝ Իմանալ միջազգային հարաբերություններում աշխարհագրական, տնտեսական և ուժի գործոնների կարևորության մասին, կարողանալ սահմանել և բնութագրել գլոբալ ժողովրդավարական ալիքի երևույթը, դրա տարատեսակները: **Թեմա 4՝** ՌԻՃԻ ԳՈՐԾՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ Ուժի գործոնի պատմական մեկնաբանությունը: Ռազմական ուժի դերը երկբևեռ աշխարհում: Միջուկային զենքի զսպիչ դերը: Հասարակ սպառազինությունների դերը ժամանակակից աշխարհում: Ռազմական ուժի դերը հետսառըպատերազմյան աշխարհում: Ճգնաժամերի կարգավորումը խաղաղարար գործողությունների և հումանիտար ինտերվենցիայի միջոցով: Անվտանգության գործոնը 20-րդ դարի վերջին – 21-րդ դարի սկզբին – վերջնարդյունք՝ Կարողանալ գնահատել և արժևորել ուժի գործոնի դերը արդի միջազգային հարաբերություններում՝ ներկայացնելով ճգնաժամերի ժամանակ և հումանիտար ինտերվենցիայի դեպքում ուժի կիրառման հաջողված ու ձախողված օրինակներ:**Թեմա 5՝** ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ ժամանակակից միջազգային հարաբերությունները տնտեսական գլոբալացման պայմաններում: Համաշխարհային տնտեսության միջազգայնացումը: Զարգացած և զարգացող պետությունների խզման վտանգը: «Հյուսիսի» զարգացած երկրների տնտեսական առաջընթացի միտումները և հակասությունները: «Հարավի» զարգացող երկրների տնտեսական զարգացման միտումները և հակասությունները – վերջնարդյունք՝ Իմանալ համաշխարհային տնտեսական զարգացման միտումների մասին և կարողանալ բնութագրել դրանց ազդեցությունը արդի միջազգային հարաբերությունների վրա: **Թեմա 6՝** ԱՐԴԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ Պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը միջազգային հարաբերություններում «սառը պատերազմի» տարիներին: ՄԱԿ-ի դերը միջազգային հակամարտությունների կարգավորման և պատերազմի կանխման գործում: Հումանիտար ինտերվենցիայի խնդիրը ժամանակակից միջազգային հարաբերություններում: Ուժի միակողմանի կիրառումը հակամարտությունների լուծման նպատակով: Տարածաշրջանային հակամարտությունները ժամանակակից աշխարհում – վերջնարդյունք՝ Կարողանալ ներկայացնել արդի միջազգային հարաբերությունների իրավաքաղաքական համակարգը: **Թեմա 7՝** ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ Համաշխարհային քաղաքականության կոսմոպոլիտացումը: Համամարդկային հիմնախնդիրների ընդհանուր բնութագիրը: Համամարդկային հիմնախնդիրների այլընտրանքային մեկնաբանությունը Բ. Լոմբորգի աշխատություններում: Շրջակա միջավայրի խնդիրները: Էներգետիկ հիմնահարցերը: Պարենային անվտանգության հիմնախնդիրը:

Դեմոգրաֆիական խնդիրը: Ժամանակակից միջազգային հարաբերությունների նոր մարտահրավերները: Միջազգային ահաբեկչությունը ժամանակակից աշխարհում: Կայուն և երկարաժամկետ զարգացման կոնցեպցիան: Համամարդկային հիմնախնդիրների առաջացման պատճառները և դրանց լուծման ճանապարհները – վերջնարդյունք՝ Իմանալ ժամանակակից աշխարհում առկա համամարդկային հիմնախնդիրների մասին ու կարողանալ ներկայացնել դրանց էությունը: **Թեմա 8՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** Միջազգային հարաբերությունները սոցիալ-քաղաքական մտքի պատմության մեջ: «Կանտոնական» պարադիգմների (հարացույցների) հիմնական դրույթները: Քաղաքական ռեալիզմ և նեոռեալիստական դպրոց: Լիբերալիզմ և լիբերալ-դեմոկրատիստական դպրոց: Մարքսիզմ-լենինիզմ և նեոմարքսիստական դպրոց: Ռացիոնալիզմ և ռեֆլեկտիվիզմ: Միջազգային հարաբերությունների ժամանակակից տեսությունների ընդհանուր գծերը: Միջազգային հարաբերությունների օրինաչափություններն ըստ քաղաքական ռեալիզմի, լիբերալ և նեոմարքսիստական դպրոցների ներկայացուցիչների – վերջնարդյունք՝ Իմանալ համաշխարհային քաղաքականության զարգացման հիմնական միտումներն, ըստ միջազգային հարաբերությունների ժամանակակից հիմնական տեսությունների:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M11. Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային իրավական հիմքերը (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Հայոց ցեղասպանության մասին անցած տասնամյակների ընթացքում բավականին շատ է գրվել ու խոսվել, հայ և օտարազգի պատմաբանները զգալի աշխատանք են կատարել 20-րդ դարի առաջին ցեղասպանության ուսումնասիրման և այդ հանցագործության տարբեր հիմնահարցերի լուսաբանման ուղղությամբ: Չնայած այդ հսկայածավալ աշխատանքներին՝ հայ ժողովրդի նկատմամբ 20-րդ դարի սկզբին կատարված ոճրագործությունը դեռևս անպատիժ է մնում: Այս իմաստով չափազանց կարևոր է հրապարակի վրա եղած պատմա-

իրավական ուսումնասիրությունների, ինչպես նաև միջազգային իրավական նորմերի հիման վրա ցույց տալ այն հնարավորությունները, որոնք կարող են օգտագործվել հայկական պահանջատիրության արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա.

1.1 Հայկական հարցին վերաբերող միջազգային իրավական փաստաթղթերի ողջ փաթեթն ու դրանից բխող Օսմանյան կայսրության ստանձնած պարտավորությունները,

1.2 ցեղասպանության հանցագործության վերաբերյալ միջազգային իրավական պայմանագրերը, կոնվենցիաներն ու դրանցից բխող Թուրքիայի պարտավորությունները

2. կկարողանա.

2.1 ուսումնասիրել և հետազոտել Հայ դատի լուծման միջազգային-իրավական հնարավորությունները՝ հենվելով պատմական փորձի, միջազգային իրավական փաստաթղթերի ու նախադեպերի վրա,

2.2 միջազգային իրավական փաստաթղթերի հիման վրա բացահայտել Հայոց ցեղասպանության համար Թուրքիայի պատասխանատվությունը

3. կտիրապետի.

3.1 ցեղասպանության հանցագործության վերաբերյալ միջազգային-իրավական նորմերին, դրանց կիրառման հնարավորություններին ու եղանակներին,

3.2 միջազգային պայմանագրերում Հայկական հարցի ձևակերպումներին ու դրանցից բխող Թուրքիայի պատասխանատվության դրույթներին,

3.3 տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերին ու դրանց գործնականում կիրառելու հնարավորություններին,

3.4 Հայաստան-Թուրքիա հարաբերությունների հաստատման համատեքստում Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հնարավորություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ցեղասպանության հանցագործությունը միջազգային իրավունքում – վերջնադրյուլ ու կը՝ Ցեղասպանության հանցագործության, սահմանման, հանցակազմի և պատժելիության ներկայացումը ըստ ՄԱԿ-ի 1948 թ. կոնվենցիայի: **Թեմա 2՝** Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային-իրավական հիմնախնդիրները – վերջնադրյուլ ու կը՝ Հայոց ցեղասպանության հետևանքների վերացման միջազգային իրավական բնույթի հիմնախնդիրների և դրանց հաղթահարման փաստարկների ներկայացում: **Թեմա 3՝** Հայկական հարցը միջազգային պայմանագրերում և Օսմանյան կայսրության պատասխանատվությունը – վերջնադրյուլ ու կը՝ Միջազգային պայմանագրերով Հայկական հարցի լուծման հետ կապված Օսմանյան կայսրության պարտավորություններ, ինչպես նաև դրանց չկատարման հետևանքով թուրքական պետության պատասխանատվության

ներկայացում: **Թեմա 4**՝ Երիտթուրքերի դատավարությունը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում – վերջևստոյ ուևը՝ Թուրքական ռազմական տրիբունալներում երիտթուրք պարագլուխների դատավարության փաստաթղթերում հայերի ցեղասպանության փաստը հաստատող փաստաթղթերի վերլուծություն: **Թեմա 5**՝ Թեհլիրյանի դատական գործը Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման համատեքստում – վերջևստոյ ուևը՝ Գերմանական դատարանի Թալեաթ փաշայի սպանության գործով դատավարության ընթացքում հայերի ցեղասպանությունը հաստատելու փաստերի և Թեհլիրյանին արդարացնելու հիմքերի վերլուծություն: **Թեմա 6**՝ Հայոց ցեղասպանության դատապարտումը տարբեր երկրների կողմից և դրա նշանակությունը – վերջևստոյ ուևը՝ Տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի բովանդակությունների վերլուծություն: **Թեմա 7**՝ Հայոց ցեղասպանության դատապարտումը միջազգային կազմակերպությունների կողմից և դրա նշանակությունը – վերջևստոյ ուևը՝ Միջազգային միջկառավարական և ոչ կառավարական կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձևերի բովանդակությունների վերլուծություն: **Թեմա 8**՝ Հայոց ցեղասպանության և հրեական հոլոքոստի ճանաչման ու դատապարտման գործընթացների համեմատական վերլուծությունը – վերջևստոյ ուևը՝ Հայոց ցեղասպանության և հրեական Հոլոքոսթի միջև առկա ընդհանրությունների և առանձնահատկությունների ներկայացում: **Թեմա 9**՝ Հայոց ցեղասպանությունը Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման համատեքստում – վերջևստոյ ուևը՝ Հայաստանի և Թուրքիայի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման վրա Հայոց ցեղասպանության հիմնահարցի ազդեցության ներկայացում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M12. Դիվանագիտական արարողակարգ (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դիվանագիտական արարողակարգ» ուսումնական դասընթացի ծրագիրը նախատեսված է «Միջազգային հարաբերություններ» և այլ հարակից մագիստրոսական ծրագրերի մագիստրանտների համար: Այն օգնում է ամբողջական պատկերացում կազմել դասընթացի շրջանակներում դասավանդվող նյութի բովանդակության վերաբերյալ: Դասընթացի ընթացքում հիմնականում ներկայացվում դիվանագիտական էթիկետի և արարողակարգի էությունը, սկզբունքները և դրանց կիրառումը ժամանակակից պրակտիկայում միջազգային հարաբերություններում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա

Դասընթացը անցնելուց հետո ուսանողները կիմանան արարողակարգի պատմությանը վերաբերող տեղեկատվություն՝ սկսած հին դարերից մինչև ժամանակակից շրջանը,

Արարողակարգի յուրահատկությունները, դրանց կիրառման առանձնահատկությունները տարբեր երկրներում,

Դիվանագիտական Էթիկետի և արարողակարգի կիրառումը ժամանակակից պրակտիկայում:

2. կկարողանա

օգտագործել ստացված գիտելիքները դիվանագիտական գործունեության ընթացքում,

տարբեր ազգերի դիվանագետների հետ հաղորդակցվելիս կիրառել ստացված գիտելիքները առավել շահավետ արդյունք ստանալու համար,

հասկանալ հաղորդակության անհաջողությունների և ձախողումների պտճառները՝ փորձելով դրանք շրջանցել կամ նվազագույնի հասցնել:

3. կտիրապետի.

կտիրապետեն միջազգային և հարաբերություններում արարողակարգի հիմնական ունակություններին և հմտություններին,

Էթիկետի և արարողակարգի հիմունքներին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ «Դիվանագիտություն և դիվանագիտական արարողակարգ – վերջնարդյունք՝ Տարբեր դիվանագիտական տերմինների ընկալում: **Թեմա 2՝** Դիվանագիտական արարողակարգի ձևավորման պատմական գործընթացը – վերջնարդյունք՝ Կտիրապետեն դիվանագիտական արարողակարգի պատեղծման պատմությանը: **Թեմա 3՝** Արարողակարգային առանձնահատկությունները Միջազգային կազմակերպություններում – վերջնարդյունք՝ Կտիրապետեն միջազգային կազմակերպությունների առանձնահատկություններին: **Թեմա 4՝** Դիվանագիտական արտոնությունները և անձեռնմխելիություն – վերջնարդյունք՝ Կրնկալեն Վիեննայի 1961 և 1963թթ. Կոնվենցիաների առանձնահատկությունները: **Թեմա 5՝** Դիվանագիտական փաստաթղթերը – վերջնարդյունք՝ Կտիրապետեն դիվանագիտական փաստաթղթերի կազմման առանձնահատկություններին և անհրաժեշտ պահանջներին: **Թեմա 6՝** Դիվանագիտական զրույցների ինստիտուտ – վերջնարդյունք՝ Ինչպես կազմակերպել դիվանագիտական ընդունելություն բարձր մակարդակով: **Թեմա 7՝** Հավատարմագրերի հանձնման արարողակարգ – վերջնարդյունք՝ Կտիրապետեն հավատարմագրերի պատրաստման առանձնահատկություններին: **Թեմա 8՝** Արտասահմանյան պատվիրակությունների և պետական գործիչների ընդունելության առանձնահատկությունները – վերջնարդյունք՝ Կտիրապետեն բարձր մակարդակի այցելություններ, պաշտոնական և աշխատանքային այցելությունները և դրանց ֆորմատը: Ոչ պաշտոնական և տարանցիկ այցելություններ:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:
Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M13. Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության հիմնահարցեր (նորագույն շրջան) (4 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին կրեդիտային համակարգով համակարգային գիտելիքներ հաղորդել համաշխարհային պատմության Նորագույն ժամանակների միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության մասին: Դասընթացի ուսումնասիրությունն ունի կարևոր նշանակություն: Այն ներկայացնում է պատմության նորագույն ժամանակներում պետությունների վարած արտաքին քաղաքականությունը, միջազգային հարաբերությունների համակարգերի ձևավորումը և փլուզումը, ճանաչված դիվանագետների և քաղաքական գործիչների դիվանագիտական գործունեությունը և այլն:

Նորագույն ժամանակների միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը, պատմական փորձի գնահատականը խիստ անհրաժեշտ է համաշխարհային պատմության այդ ժամանակաշրջանն օբյեկտիվ բնութագրելու համար: Նորագույն ժամանակներում տեղի էր ունենում միջազգային կապերի, դիվանագիտության, դիվանագիտական մեթոդների, դիվանագիտական ապարատի կատարելագործման, միջազգային նոր համակարգերի ձևավորման և տրոհման գործընթացը:

Նորագույն ժամանակների միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմության ուսումնասիրությունը անհրաժեշտ է ներկայիս միջազգային հարաբերությունները և իրադրությունը ճիշտ ընկալելու և գնահատելու, հետևություններ անելու տեսանկյունից:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա

- միջազգային հարաբերությունների և դիվանագիտության նորագույն ժամանակների և արդի շրջանի պատմությունը
- պատմության նորագույն ժամանակներում և արդի շրջանում դիվանագիտության զարգացման պատմությունը
- դիվանագիտության տեղն ու դերը նորագույն ժամանակների և արդի շրջանի միջազգային հարաբերություններում

2.կկարողանա

- նորագույն ժամանակների և արդի շրջանի պատմական գործընթացները, պետությունների դերը միջազգային հարաբերությունների համակարգում արժևորել՝
- նորագույն ժամանակների և արդի շրջանի միջազգային դրությունը

3. կտիրապետի

- նորագույն ժամանակների և արդի շրջանի միջազգային հարաբերությունների և դիվանագիտության պատմությանը
- նորագույն ժամանակների և արդի շրջանի պատմական խոշոր անհատների դերին միջազգային հարաբերություններում
- նորագույն ժամանակների և արդի շրջանի միջպետական և միջազգային պայմանագրերին
- տարբեր երկրների դերին միջազգային հարաբերությունների արդի շրջանի ձևավորման գործընթացում
- դիվանագիտության նորագույն ժամանակների և արդի շրջանի մեթոդներին և սկզբունքներին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Միջազգային հարաբերությունների Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի ձևավորումը /1918-1923թթ. / – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերությունների Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի հիմնական սկզբունքների իմացություն: **Թեմա 2**՝ Միջազգային հարաբերությունների Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի ճգնաժամի հասունացումը /1922-1933թթ. / – վերջնարդյունք՝ Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի ճգնաժամի պատճառների իմացություն: **Թեմա 3**՝ Դիվանագիտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեին: Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի փլուզումը /1933–1939թթ. / – վերջնարդյունք՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրեի միջազգային իրադրության գնահատում: **Թեմա 4** Դիվանագիտությունը Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին /1939-1945 թթ. /: Միջազգային հարաբերությունների Պոտսդամյան համակարգի ձևավորումը – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերությունների Պոտսդամյան համակարգի հիմնական սկզբունքների իմացություն: **Թեմա 5**՝ «Սառը պատերազմի» քաղաքականության սկիզբը միջազգային հարաբերություններում: ՆԱՏՕ–ի կազմավորումը – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերություններում «Սառը պատերազմի» տարիների պատմության իմացություն: **Թեմա 6**՝ Խաղաղ կարգավորման խնդիրը Եվրոպայում 1950-1973 թթ. : Արևմտյան Բեռլինի հարցը – վերջնարդյունք՝ Եվրոպայում խաղաղ կարգավորման գործընթացի իմացություն: **Թեմա 7**՝ ԽՍՀՄ–ի արտաքին քաղաքականությունը 1950-1970–ական թթ. – վերջնարդյունք՝ ԽՍՀՄ–ի արտաքին քաղաքականության սկզբունքների իմացություն: **Թեմա 8**՝ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության նոր միտումները 1960-1970-ական թթ. : Զինաթափման խնդիրը – վերջնարդյունք՝ 1960-1970-ական թթ. միջազգային հարաբերությունների նոր միտումների իմացություն: **Թեմա 9**՝ Մերձավոր և Միջին Արևելքի երկրները միջազգային հարաբերություններում – վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերություններում Մերձավոր և Միջին Արևելքի երկրների դերի իմացություն: **Թեմա 10**՝ Միջազգային հարաբերությունների և դիվանագիտության նոր միտումները 1980-1990 թթ. – վերջնարդյունք՝ 1980-1990 թթ. միջազգային հարաբերությունների նոր միտումների

ի մ ա գ ու թ յ ու ն : **Թեմա 11**՝ Միջպետական հարաբերությունները Անկախ պետությունների համագործակցության /ԱՊՀ/ շրջնականերում – վերջնարդյունք՝ ԱՊՀ շրջնականերում միջպետական հարաբերությունների իմացություն: **Թեմա 12**՝ Միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորումը 1990-ական թթ. – վերջնարդյունք՝ 1990-ական թթ. միջազգային հարաբերությունների նոր համակարգի ձևավորման հիմնական սկզբունքների: **Թեմա 13**՝ Նոր աշխարհակարգի ձևավորումը 21-րդ դարի սկզբին և միջազգային հարաբերությունների արդի հիմնախնդիրները – վերջնարդյունք՝ 21-րդ դարի սկզբի միջազգային հարաբերությունների արդի հիմնահարցերի իմացություն:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M20. Միջազգային կազմակերպությունների դերը գլոբալ անվտանգության համատեքստում (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց Նպատակը.

Դասընթացի նպատակն է ձևավորել միջազգային կազմակերպությունների տեսակների, գործունեության ոլորտների և առանձնահատկությունների մասին գիտելիքներ ժամանակակից համաշխարհային քաղաքականությունը համաշխարհայնացման և համակարգի ձևավորման գլոբալ կառավարման համատեքստում:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա

- միջազգային կազմակերպությունների ներկա վիճակն ու դինամիկան ժամանակակից համաշխարհային քաղաքականության մեջ՝ գլոբալիզացիայի և գլոբալ կառավարման համակարգի ձևավորման համատեքստում,
- միջազգային կազմակերպությունների ուսումնասիրության հիմնական հայեցակարգային մոտեցումները,
- ժամանակակից համաշխարհային կազմակերպությունների տիպաբանությունը և առանձնահատկությունը՝ որպես համաշխարհային քաղաքականության սուբյեկտներ,
- առաջատար միջազգային կազմակերպությունների գործունեության հիմնական ուղղություններն ու ձևաչափերը,

- միջազգային կազմակերպությունների ուսումնասիրման մեթոդները,
- արդի համաշխարհային քաղաքականության մեջ միջազգային կազմակերպությունների զարգացման իրավիճակային վերլուծությունների և կանխատեսման սցենարների մշակման հիմնական վերլուծական մոտեցումները

2. կկարողանա

- ժամանակակից համաշխարհային քաղաքականության մեջ միջազգային կազմակերպությունների դինամիկայի վրա ազդող հիմնական գործոնները գնահատելու հմտություններին,
- միջազգային կազմակերպությունների՝ որպես համաշխարհային քաղաքականության սուբյեկտների գործունեության հիմնական ոլորտներին, նրանց գործունեության առանձնահատկությունները ու ձևաչափերը վերլուծելու հմտություններին,
- միջազգային կազմակերպությունների գործունեության դինամիկան վերահսկելու, դրանց կառուցվածքն ու օրենսդրությունը վերլուծելու հմտություններին,
- իրավիճակների վերլուծության մոդելների մշակման և միջազգային կազմակերպությունների՝ որպես համաշխարհային քաղաքականության սուբյեկտների կանխատեսող սցենարների մշակման հմտություններին,

3. կտիրապետի

- օգտագործել միջառարկայական գիտելիքները, որոշել միջազգային կազմակերպությունների կարևորությունը ժամանակակից համաշխարհային քաղաքականության մեջ,
- տիպաբանել միջազգային կազմակերպությունները՝ ըստ տարբեր չափանիշների,
- բացահայտել միջազգային կազմակերպությունների ուսումնասիրության տարբեր մոտեցումները,
- բացահայտել միջազգային կազմակերպությունների զարգացման դինամիկայի գործոնները, առարկաները և միտումները,
- վերլուծել և կիրառել իրավիճակային վերլուծության, կանխատեսման սցենարների հիմնական մոդելները ժամանակակից համաշխարհային քաղաքականության մեջ:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Առարկան, հիմնական հասկացությունները և դասընթացի մեթոդաբանություն հիմնական հասկացություններ և մեթոդաբանությունը, վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերությունների զարգացման ներկա փուլերի որակական առանձնահատկությունները, Համաշխարհային քաղաքականություն և միջազգային հարաբերություններ, զլոբալ կառավարման հայեցակարգը Միջազգային կազմակերպությունների հայեցակարգը և բնութագրերը: Առաջին միջազգային կազմակերպությունների ստեղծումը: **Թեմա 2**՝ միջազգային

կազմակերպությունները որպես ժամանակակից համաշխարհային քաղաքականության սուբյեկտներ, վերջնարդյունք՝ Միջազգային հարաբերությունների սուբյեկտների և դերակատարների հայեցակարգը: Ժամանակակից համաշխարհային քաղաքականության սուբյեկտները: Միջազգային կազմակերպությունների տեղն ու դերը համաշխարհային քաղաքականության մեջ: Միջազգային կազմակերպությունների իրավաբանական անհատականությունը, իրավասությունը և պատասխանատվությունը: Միջազգային իրավունքը և միջազգային կազմակերպությունների իրավունքը: **Թեմա 3՝** Միջազգային կազմակերպությունների տեսություններ, վերջնարդյունք՝ Միջազգային կազմակերպությունների հիմնական տեսությունները, Կազմակերպության տեսության հնարավորությունները միջազգային կազմակերպությունների վերլուծության մեջ: Միջազգային կազմակերպությունները՝ որպես սոցիալական օրգանիզմներ: Միջազգային կազմակերպությունների գործունեության կազմակերպչական և իրավական խնդիրները: **Թեմա 4՝** Միջազգային կազմակերպությունների համեմատական վերլուծություն ժամանակակից աշխարհ. տարբերակման չափանիշներ, վերջնարդյունք՝ Համընդհանուր, տարածաշրջանային և ենթատարածաշրջանային միջազգային կազմակերպությունները: Միջազգային կազմակերպությունների և տարածաշրջանային ինտեգրացիոն ասոցիացիաները: Միջազգային հասարակական կազմակերպությունները: **Թեմա 5՝** ՄԱԿ-ի տեղն ու դերը ժամանակակից աշխարհում, վերջնարդյունք՝ ՄԱԿ-ի ստեղծման նախապատմությունը և պատմությունը: ՄԱԿ-ը՝ որպես գլոբալ խնդիրների լուծման և գլոբալ մարտահրավերներին պատասխաններ գտնելու հիմք: ՄԱԿ-ի կազմակերպչական և իրավական գործունեությունը: ՄԱԿ-ի համակարգը, ծրագրերը և մասնագիտացված գործակալությունները: **Թեմա 6՝** Միջազգային տնտեսական կազմակերպությունները, վերջնարդյունք՝ Միջազգային տնտեսական կազմակերպությունների կարևորությունը ժամանակակից աշխարհում: Համաշխարհային տնտեսական խնդիրների լուծումների միջազգային համակարգի ձևավորումը: **Թեմա 7՝** Ոչ ֆորմալ հաստատություններ և կառավարման գլոբալ ֆորումներ, վերջնարդյունք՝ Համաշխարհային կառավարման ֆեռումներ և պրակտիկան: Գլոբալ քաղաքական և տնտեսական գործընթացները կարգավորելու բազմակողմ ինստիտուտները և մեխանիզմները: **Թեմա 8՝** Հասարակական կազմակերպությունները ժամանակակից համաշխարհային քաղաքականության մեջ, վերջնարդյունք՝ Հասարակական միջազգային կազմակերպությունների հայեցակարգը, դրանց տարբերությունը միջկառավարական միջազգային կազմակերպություններից: Միջազգային հասարակական կազմակերպությունների սուբյեկտիվության աստիճանը: Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

Տիտղոսային ծրագրի կամընտրական դասընթացներ

12/M14 Ժողովրդավարությունը և ժամանակակից քաղաքական գործընթացները (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Ուսումնական գործունեության ընթացքում ուսանողներին կրեդիտային համակարգով գիտելիքներ հաղորդել ժողովրդավարության հիմնահարցերի, անցած ուղու, դերակատարության, առանձնահատկությունների, դրսևտրման ձևերի, ինչպես նաև որպես քաղաքական համակարգի առավել կատարելագործված ձևի ՀՀ-ում նրա գոյության ու զարգացման անհրաժեշտության վերաբերյալ: Ծրագիրը ուսումնասիրելիս ապագա մագիստրոսը ձեռք կբերի տեսական ու գործնական հմտություններ ուսումնական նյութերով ինքնուրույն աշխատելու, ինչպես նաև ժողովրդավարության տեսական գիտելիքները հասարակական-քաղաքական կյանքում գործնականում կիրառելու վերաբերյալ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. **կիմանա** Ապագա միջազգայնագետների կողմից ժողովրդավարության եւ արդի քաղաքական գործընթացների իմացությունը հնարավորություն կտա մագիստրանտներին խորը գիտելիքներ ձեռք բերել ժողովրդավարական գործընթացների, նրա ինստիտուտների վերաբերյալ, ինչը հատկապես անհրաժեշտություն է անցման շրջանում գտնվող ՀՀ-ի համար:

2. **կկարողանա** Հասկանալ եւ վերլուծել արդի ժամանակաշրջանում քաղաքական գործընթացների եւ ժողովրդավարության փոխկապակցություններն ու զարգացման միտումները, ճիշտ կանխորոշել սպասվող սպասվող գործընթացների դինամիկան:

3. **կտիրապետի.** Ժողովրդավարական գործընթացների օրինաչափություններին, հիմնախնդիրներին ուղղութիւններին, ինչպես նաև անցման շրջանի յուրահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Ժողովրդավարության էությունն ու ըմբռնումը – վերջնարդյունք՝ Ընդհ. պատկերացումժող. մասին: **Թեմա 2՝** Ժողովրդավարության զարգացման պատմական էտապները – վերջնարդյունք՝ Ժող. պատմական էտապն. ընդհ. նկարագիրը: **Թեմա 3՝** Ժողովրդավարության հիմնական գծերը եւ նախադրյալները – վերջնարդյունք՝ Ժող. ըդհ. գծերի և առանձնահատկ. մասին գիտելիքն. : **Թեմա 4՝** Ժողովրդավարությունը որպես հասարակական-քաղաքական հարաբերությունների ձեւ եւ արժեք – վերջնարդյունք՝ Ժող. որպեսքաղ. հարաբերություններիձև:1948թ. ՄԱԿ-ի կողմ. ընդ. հռչակագրիդրոյթ. վեր. ընդ. պատկերացում: **Թեմա 5՝** Ժողովրդավարությունը որպես իշխանության ձեւ եւ քաղաքական գործընթացների միջոց – վերջնարդյունք՝ Ժող. որպեսքաղ. համակարգիուսումնասիրությունը: **Թեմա 6՝** Քաղաքական զարգացումների բնույթը եւ ժողովրդավարական

ինստիտուտների ձեւավորման առանձնահատկությունները անցումային հասարակություններում – վերջնարդյունք՝ Անցումայինհաս. ժող. ինստ. ձեւավորմանառանձնահատկ. : **Թեմա 7՝** Ժողովրդավարությունը եւ հասարակության առաջընթացը – վերջնարդյունք՝ ժող. ժողպեսհասարակությանառաջընթացհիկարևորպայմանիընկալումը: **Թեմա 8՝** Ընտրական գործընթացները որպես ժողովրդավարության կարեւոր բաղկացուցիչ մաս եւ նվաճում – վերջնարդյունք՝ Ընտրականգործընթաց. կարևորությանորպես ժող. նվաճմանընկալումը: **Թեմա 9՝** Ժողովրդավարական գործընթացները եւ տարածաշրջանային քաղաքականությունը – վերջնարդյունք՝ Տարածաշրջանային առանձ-նահատկություն-ներիպարագա յումժող. գործ. առանձնահատկ ություններընկալումը: **Թեմա 10՝** Ժողովրդավարությունը որպես գլոբալիզացիայի բաղկացուցիչ մաս – վերջնարդյունք՝ ժող. նգլոբալիզացիայիփոխազդեցություններիուսումն. կընկալումը: **Թեմա 11՝** Աշխարհաքաղաքական գործընթացների եւ ժողովրդավարության փոխկապակցությունը – վերջնարդյունք՝ Պատկերացումաշխարհաքաղաքականգործընթացների բնույթի կժող. մասին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M15 Տարածաշրջանը գլոբալացման գործընթացներում (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 1-ին կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Առարկայի նպատակն է ներկայացնել տարածաշրջանը իր ազգային, լեզվական, կրոնական ու հասարակական ողջ բազմազանությամբ, միաժամանակ համառոտ անդրադառնալով 19-20-րդ դարերի ընթացքում տեղի ժողովուրդների անցած ուղուն:

Հատուկ նշանակություն է տրված ազգային-հասարակական շարժումներին, որոնք ԽՍՀՄ փլուզման հետևանքով հանգեցրին անկախ պետությունների ձևավորմանը: Մանրամասն անդրադարձ է կատարվում էթնիկ-տարածքային հիմնախնդիրներին մանավանդ նրանց, որոնք վերաճեցին ռազմական կոնֆլիկտների՝ դառնալով միջազգային դիվանագիտության քննության առարկա: Կարևոր տեղ է հատկացվում միջազգային կազմակերպությունների դերին հիշյալ հիմնախնդիրների կարգավորման գործում:

Առանձին քննության են ենթարկվում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի փոխհարաբերությունները անցած երկուսուկես տասնամյակում, ինչպես նաև գլոբալ և տարածաշրջանային դերակատարների /Ռուսաստանյան Դաշնություն, ԱՄՆ, Եվրոպական պետություններ, Թուրքիա, Իրան/ վարած քաղաքականությունը

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա Կովկասյան տարածաշրջանի հետխորհրդային շրջանի քաղաքական պետության հիմնահարցերը

2. կկարողանա համակողմանիորեն ներկայացնել տարածաշրջանի ազգային-տարածքային հիմնախնդիրները, անցած ուղին և դրանց ներկա վիճակը

3. կսիրապետի. Միջազգային հարաբերություններում տարածաշրջանի /հատկապես Հարավային Կովկասի/ տեղն ու դերը:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Համառոտ ակնարկ տարածաշրջանի պատմության և մինչև 18-րդ դ. վերջը Կովկասի ռուսական նվաճումը – վերջնարդյունք՝ Կովկասի տարածքում կազմավորված պետություններ, Ռուսական պետության ձգտումը դեպի հարավային ծովեր: **Թեմա 2**՝ Կովկասում ստեղծված պետական կազմավորումները 1917-1922 թթ. – վերջնարդյունք՝ Ռուսական կայսրության անկում: Հյուսիսային Կովկասի, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդայնացում: Կովկասի ժողովուրդները Խորհրդային Միության կազմում: **Թեմա 3**՝ Տարածաշրջանի ազգային-լեզվական և կրոնամշակութային պատկերը – վերջնարդյունք՝ Կովկասում և նրա հարևանությամբ ներկայումս բնակվող ազգերի լեզուները, համապատասխան լեզվախմբերին և լեզվաընտանիքներին դրանց պատկանելությունը: Կովկասի կրոնական ու դավանաբանական խճանկարը: **Թեմա 4**՝ Խ. Միության փլուզումը: Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախացումը – վերջնարդյունք՝ վերակառուցման քաղաքականությունը Խորհրդային Միությունում: Ազգային շարժումների սկզբնավորումը, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի անկախացման գործընթացը: **Թեմա 5**՝ Էթնիկ կոնֆլիկտներ Կովկասում – վերջնարդյունք՝ Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի, Աբխազիայի, ինչպես նաև Չեչնիայի հիմնախնդիրները: **Թեմա 6**՝ Ռուսաստանյան Դաշնության. Թուրքիայի և Իրանի քաղաքականությունը Հար. Կովկասի նկատմամբ – վերջնարդյունք՝ Կովկասին անմիջականորեն հարևան երեք մեծ պետությունների քաղաքականությունը, մրցակցությունն ու համագործակցությունը Հարավային կովկասի երեք հանրապետությունների նկատմամբ: **Թեմա 7**՝ ԱՄՆ և Եվրոպական երկրների քաղաքականությունը Հարավային Կովկասում – վերջնարդյունք՝ Արևմտյան պետությունների դիրքորոշումները Հարավկովկասյան պետությունների և հարևան պետությունների հարաբերություններին: Կովկասին վերապահված դերը արևմտյան պետությունների հեռահար ծրագրերում:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատուսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M16 Եվրոպական ինտեգրացիա. հիմնախնդիրներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Եվրոպական ինտեգրացիան և Եվրոպական Միության կազմավորումը համաշխարհային ինտեգրացիոն, քաղաքական, տնտեսական և մշակութային-քաղաքակրթական գործընթացների վրա հսկայական ներգործություն ունի՝ կարևոր տեղ զբաղեցնելով միջազգային հարաբերություններում դիվանագիտական գործունեության համար:

Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո սկսված Եվրոպայի միավորման գործընթացը գործնականում իր ավարտին հասավ մեր օրերում՝ միջազգային ասպարեզում սահմանելով ԵՄ լուրջ դերակատարությունը:

ԵՄ անդամ 28 պետությունների շարքում են Մեծ ութնյակի և G20-ի անդամները, որոնք զգալի դերակատարություն ունեն համաշխարհային գործընթացների վրա, դիվանագիտական ճակատում հանդես են գալիս համագործակցված, միևնույն ժամանակ առաջնային պլանում պահելով իրենց ազգային-պետական շահերը:

Այս համատեքստում անհրաժեշտ և նպատակահարմար է դիտարկել Եվրոպական ինտեգրացիայի պատմությունը, հաղթահարված և առկա հիմնահարցերը, Հայաստանի հանրապետության և Եվրոպական կառույցների միջև առկա գործակցությունը:

Իր հերթին հետխորհրդային տարածաշրջանը բազմաթիվ թելերով կապված է Եվրոպական ինտեգրման գործընթացներին, Եվրոպական ուղղությունը դիտարկվում է կարևոր առաջնահերթություն քաղաքական, տնտեսական և իրավական առումներով:

Միևնույն ժամանակ այդ միավորման ճանապարհին սկզբունքային և առաջնային է վեր հանել ԵՄ հսկաների՝ Գերմանիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի ինտեգրացիան և Եվրոպականության քաղաքականությունը, դիվանագիտությունը, դրանց զարգացման փուլերն ու առանձնահատկությունները: Հետաքրքրական է նաև ԵՄ անդամ Արևելյան Եվրոպայի շարք այլ երկրների /Լեհաստան, Չեխիա, Մերձբալթյան երկրներ/ ինտեգրացիոն քաղաքականությունը:

Եվրոպայի և աշխարհի շատ տարածաշրջաններում ԵՄ կամ ԵՄ անդամ երկրների արտաքին քաղաքականությունը սերտորեն շաղկապված է այլ պետությունների /ԱՄՆ, ՌԴ և այլն/ քաղաքականության հետ, ուստի անդրադարձն այդ հարաբերություններին ևս անհրաժեշտ է՝ ամբողջացնելու համար միջազգային ասպարեզում ընթացող ինտեգրացիոն և դիվանագիտական գործընթացներն ու պայքարը: ԵՄ շուրջ այսօր էլ հետաքրքիր զարգացումներ են ընթանում, որոնք անմիջականորեն շոշափում են իրավաքաղաքական և ֆինանսատնտեսական առանցքային հարցեր:

Դասավանդվող գիտակարգը նպատակ է հետապնդում ապագա մասնագետներին ներկայացնելու Եվրոպական ինտեգրացիայի պատմությունը, ԵՄ կազմավորումը, վեր հանելու այն մտեցումներն ու սկզբունքները, առկա հիմնախնդիրները, որոնք կիրառություն են գտել միջպետական հարաբերություններում, դիվանագիտական և քաղաքական պրակտիկայում:

Մասնագիտական առարկայի շրջանակներում ձեռք բերված գիտելիքներն ու վերլուծական կարողությունները կարող են ամուր և հիմք ծառայել ապագա միջազգայնագետի արդյունավետ գործունեության համար:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա

- Եվրոպական ինտեգրման նախադրյալները, միավորման տնտեսական, քաղաքական և մշակութային-քաղաքակրթական հրամայականները – Եվրոպական Միության կազմավորման առանձնահատկություններն ու փուլերը
– Եվրոպական Միության առջև ծառայած արդի հիմնախնդիրներն ու մարտահրավերները
– Եվրոպական կառույցներին ՀՀ ինտեգրման և ԵՄ հետ հարաբերությունների զարգացման ընթացքը

2. կկարողանա

- վրոպական ինտեգրման, ԵՄ կազմավորման միջազգային-իրավական հիմքերը, պատմական փորձը, ընդլայնման հնարավորությունները, միասնական շուկայի ձևավորումը ԵՄ արտաքին քաղաքական և անվտանգության համակարգերը
– Եվրոպական ինտեգրացիայի քաղաքական, տնտեսական, անվտանգության և մշակութային առանձնահատկությունները, հիմնախնդիրներն ու հեռանկարները

3. կտիրապետի

- ԵՄ կազմավորման միջազգային-իրավական նորմերին, կառույցի ընդլայնման և բարեփոխման հնարավորություններին ու հեռանկարներին
– ԵՄ արտաքին քաղաքական և անվտանգության հիմնախնդիրներին. ԵՄ տնտեսական քաղաքականության դրույթներին ու հիմնախնդիրներին
– ԵՄ անդամ տարբեր երկրների հետ ՀՀ հարաբերությունների զարգացման ընթացքին, ԵՄ հետ ՀՀ գործունեության իրավապայմանագրային դաշտին և ոլորտներին
– Միության առջև ծառայած արդի հիմնախնդիրներն ու մարտահրավերները և այդ համատեքստում լուծման կամ կարգավորիչ հնարավորություններին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Եվրոպան երկրորդ աշխարհամարտից հետո. Եվրոպական ինտեգրացիան հետպատերազմյան տարիներին – վերջնաբայանք՝ Ներկայացվում է միասնական Եվրոպայի գաղափարը, Երկրորդ աշխարհամարտից հետո արևմտաեվրոպական երկրների ինտեգրացիայի գաղափարական և գործնական դրսևորումները: Ռ. Շումանի դեկլարացիան Եվրոպայի Խորհուրդը և Եվրոպական աժխի և պողպատի ընկերակցություն: **Թեմա 2**՝ Եվրոպական ինտեգրացիայի փուլերը. Եվրոպական Միության կազմավորումը, հիմնա-խնդիրներն ու ընթացքը – վերջնաբայանք՝ Ներկայացվում են եվրոպական ինտեգրացիայի, ԵՄ ընդլայնման փուլերը, առանձին փուլերում տեղ գտած հիմնահարցերն ու պայմանները, ինտեգրման սոցիալ-տնտեսական ու քաղաքական նախադրյալները, իրավապայմանագրային դաշտը, անցումը միասնական շուկային: Մասստրիխտի համաձայնագիրը: **Թեմա 3**՝ Արևելյան Եվրոպայի և Բալթյան երկրների եվրո-

ատլանտյան ինտեգրման գործընթացը – վերջնարդյունք՝ Արևելյան Եվրոպայի երկրների արտաքին քաղաքականությունը «սառը պատերազմի» ավարտից հետո և Եվրոատլանտյան ինտեգրման գործընթացը. Չեխիա, Լեհաստան, Հունգարիա, Մերձբալթյան երկրներ: Վիշեգրադյան գործընթացը, անդամակցությունը միացյալ Եվրոպային: **Թեմա 4՝** Եվրոպական ինտեգրման սոցիոմշակութային հիմքերը: Եվրոպական գաղափարի էությունը և զարգացումը: Եվրոպական քաղաքակրթական ժառանգությունը – վերջնարդյունք՝ Ներկայացվում են ինտեգրման քաղաքական տեսությունները՝ Ֆեդերալիզմ /դաշնապետություն/, ֆունկցիոնալիզմ, նորաֆունկցիոնալիզ, բազմամակարդակ ղեկավարման, ինտեգրման և հաղորդակցման: **Թեմա 5՝** Եվրոպականացման արդի հայեցակարգերը – վերջնարդյունք՝ Եվրոպականացումը, որպես ԵՄ հետ գործակցային ու գործընկե-րային հարաբերությունների կա-ռուցման գործընթաց: Փոխալսմա-նավորման, սոցիալականացման, մասնակցայնության համար ներկայացվող պահանջները և չափանիշերը: **Թեմա 6՝** Եվրոպական ինտեգրման սոցիո-մշակութային հիմքերը – վերջնարդյունք՝ Կիմանան Ատլանտիստական, Եվրոպական և Եվրոատլանտյան մոտեցումների էությունը: **Թեմա 7՝** Եվրոպական ինտեգրման աշխարհաքաղաքական և պատմաքաղաքական հիմքերը. Եվրոպական ինտեգրման ընդլայնման և գործընկերության խորացման հիմնահարցը – վերջնարդյունք՝ Ներկայացվում են տնտեսական, քաղաքական, պատմական, իրավա-կան գործոնները որպես հիմք ազգային, միջազգային և ընդհանուր շահերի ինտեգրման ճանապարհին: Ներկայացվում են եվրոպական առաջատար երկրների, ՌԴ և ԱՄՆ դիրքորոշումները ԵՄ ընդլայնման, տնտեսական և քաղաքական նախաձեռնությունների առումով: Ատլանտիստական, Եվրոպական և Եվրոատլանտյան մոտեցումների էությունը: **Թեմա 8** ՀՀ Եվրոպական ինտե-գրման առաջնային հիմնա-խնդիրները: ԵԽ-ին և ԵԱՀԿ-ին ՀՀ անդամակ-ցության պարտավորությունները – վերջնարդյունք՝ րկայացվում են ԵԽ և ԵԱՀԿ դերը ՀՀ քաղաքական համակարգի ժողովրդավարացման համա-տեքստում: ԵՄ-ի անվտան-գության ռազմավարությունը և «Ընդլայնված եվրոպա. Նոր հարևանություն» ծրագրի էությունը: ԵՄ-ՀՀ փոխգործակցության ոլորտ-ներն ու ծրագրերը: ԳՀՀ և ՏԱՄԻՍ: ՏՐԱՍԵԿԱ և ԻՆՕԳԵՅԹ: ՀՀ-ն և Եվրոպական հարևանության քաղաքականությունը /ԵՀԲ/: ՀՀ առաջատար ներքաղաքական դերակատարների դիրքորոշում-ները եվրոպական ինտեգրման հարցում: **Թեմա 9՝** Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և ռազմավարական նշանա-կությունը Եվրոպական միա-վորման համատեքստում – վերջնարդյունք՝ Ներկայացվում են Կենտրոն-ծայրամաս փոխգործակ-ցության հայեցակարգը հարավկովկասյան երկրների ինտեգրման տրամա-բանության մեջ: Հարավկովկասյան երկրների Եվրոպականացման հիմնահարցը: **Թեմա 10՝** «Արևելյան գործընկե-րությունը» նախաձեռ-նությունը և ՀՀ-ն – վերջնարդյունք՝ Ներկայացվում են ԵՄ հետ նախկին խորհրդային 6 երկրների հարաբե-

րությունների խորացման և ամրա-պնդման նախաձեռնությունը, նրա իրավապայմանագրային և գործակ-ցության հնարավորությունները. Պրահայի, Վարշավայի, Վիլնյուսի, Բրյուսելի գործընթացները: Ասոցացման հիմնախնդիրը: **Թեմա 11**՝ ԵՄ-ն ժամանակակից փուլում: Բրեքզիտ – վերջնարդյունք՝ Ներկայացվում են ԵՄ քաղաքական, սոցիալական, տնտեսա-կան, անվտանգության, միգրացիոն հիմնախնդիրները: Բրեքզիտը և հնարավոր հետևանքները::

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M17 Հարակից երկրների պատմության հիմնափուլերը (3 կրեդիտ)

Շարաթական 2 ժամ, 2-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

Դասընթացը ներառում է հարակից երկրների քաղաքական պատմության հիմնական փուլերի (հին դարեր, միջնադար, նոր շրջան և նորագույն) հիմնահարցերը: Այն ուսանողներին ներկայացնում է այդ ժողովուրդների և նրանց ստեղծած պետությունների վերելքի ու վայրէջքի դարաշրջանները, նրանց զարգացման առանձնահատկությունները, ժամանակակից տեսքով նրանց ձևավորման ընթացքը:

Դասավանդման ընթացքում պարբերաբար կիրառվում է համեմատական սկզբունքը, ինչպես հիշյալ երկրների, այնպես էլ նրանց և Հայաստանի պատմության միջև:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1. կիմանա հարակից երկրների քաղաքական պատմության հիմնական փուլերը

2. կկարողանա համակողմանի ներկայացնել տարածաշրջանի զարգացման հիմնական առանձնահատկությունները

3. կտիրապետի. Միջազգային հարաբերություններում Հայաստանին հարակից երկրների արդի հիմնախնդիրների առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Մերձավոր Արևելքի քաղաքական պատմության ներածություն: Իրանական սարահարթի հնագույն պետությունները /մինչև 7-րդ դ./ - վերջնարդյունք պատկերացում իրանական սարահարթի հնագույն պետությունների մասին: **Թեմա 2**՝ Իսլամ, արաբական նվաճումներ, խալիֆայություն: Իրանը իսլամի ընդունումից մինչև ուշ միջնադար – վերջնարդյունք՝ արաբների կողմից Իրանի նվաճումը, նոր կրոնի տարածումը, Սեֆյան պետության պատերազմները օսմանցիների դեմ: **Թեմա 3**՝ Մելջուկ-

թուրքերի արշավանքները: Օսմանյան սուլթանության ստեղծումը, հզորացումն ու թուլացումը – վերջնարդյունք՝ Մելջուկ-թուրքերի արշավանքներ, թուրքական տարրի մուտքը Փոքր Ասիա: **Թեմա 4՝** Օսմանյան կայսրության արտաքին քաղաքականությունը 19-րդ դ. և 20-րդ դ. Սկզբին: Թանգիմաթ, երիտթուրքական հեղափոխություն – վերջնարդյունք՝ բարեփոխումները Օսմանյան կայսրությունում, ժողովուրդների պայքարը Օսմանյան տիրապետությունից ազատագրվելու համար: **Թեմա 5՝** Իրանը 19-20-րդ դարերում – վերջնարդյունք՝ ռուս-պարսկական պատերազմներ, Փեհլիների իշխանություն և Իսլամական հեղափոխություն: **Թեմա 6՝** Քեմալական հեղափոխություն – վերջնարդյունք՝ քեմալական շարժման սկիզբը, Թուրքիային հանրապետության հռչակումը: **Թեմա 7՝** Հնագույն պետությունները Վրաստանում: Վրաստանը մինչև ռուսական նվաճումը – վերջնարդյունք՝ միջնադարյան Վրաստանի ծաղկուն շրջանը Բագրատունիների օրոք, մոնղոլական-թուրքական արշավանքները: **Թեմա 8՝** Վրաստանը Ռուսական կայսրության և Խորհրդային Միության կազմում– վերջնարդյունք՝ ռուս-վրացական պայմանագրեր, Արևմտյան Վրաստանի միացումը Ռուսաստանին և Վրաստանի խորհրդայնացման դրդապատճառներ: **Թեմա 9՝** Ադրբեջանի պատմությունը – Ադրբեջանի թուրքացման գործընթացի փուլերը, Ադրբեջանի տարածքի անցումը Ռուսաստանին:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M18. Էթիկետ և միջազգային հաղորդակցություն (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

- Ծանոթացնել միջազգային պրակտիկայում ընդունված դիվանագիտական էթիկետի նորմերին և սկզբունքներին:
- Ձևավորել միջանձնային և միջմշակութային էթիկետային հաղորդակցության ունակություններ և հմտություններ,
- Սովորեցնել դրսևորել էմպաթիա և հանդուրժողություն միջմշակութային հաղորդակցության մեջ:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը .

1.կիմանա.

- Էթիկետի պատմությանը վերաբերող տեղեկատվություն՝ սկսած հին դարերից մինչև ժամանակակից շրջանը,
- Էթիկետային վերբալ և ոչ վերբալ բանաձևերի յուրահատկությունները, դրանց կիրառման առանձնահատկությունները տարբեր երկրներում,

- Դիվանագիտական էթիկետի և արարողակարգի կիրառումը ժամանակակից պրակտիկայում,
- Մշակութային արժեքների համակարգը տարբեր ժողովուրդների մոտ /ինդիվիդուալիստական և կոլեկտիվիստական, մոնոքրոմ և պոլիքրոմ մշակույթներ/, դրա դերը և վարքի սոցիալ-հոգեբանական մեխանիզմների արտացոլումը միջմշակութային հաղորդակության մեջ:

2. կկարողանա

- Ուսումնասիրել և կիրառել վարվեցողության վերբալ և ոչ վերբալ էթիկետային մոդելները տարբեր իրավիճակներում, մասնավորապես, դիվանագիտական հանդիպումների ժամանակ,
- Հասկանալ հաղորդակցման անհաջողությունների և ձախողումները պտճառները որպես սոցիալ-մշակութային և ազգային կարծրատիպերի հետևանք:

3. կտիրապետի

- Էթիկետի և միջմշակութային հաղորդակցության հիմունքներին և առանձնահատկություններին:

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Էթիկետ և էթիկա: Էթիկետ և ծես /ընդհանրություններ և տարբերություններ/: Էթիկետին վերաբերող գրական հուշարձաններ: Էթիկետը Հին աշխարհում /եգիպտոս, Հոմ, Հունաստան/, Էթիկետը վաղ միջնադարում, Վերածնունդի ժամանակաշրջանում, 17-19 դարերում /Իտալիա, Ֆրանսիա, Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան և այլն/ – վերջնարդյունք՝ Պիտի իմանա էթիկետի առաջացման և զարգացման պատմության հիմնական փուլերը, էթիկետին վերաբերող հիմնական գրական հուշարձանները, կարողանա տարանջատել էթիկետ և էթիկա, էթիկետ և ծես հասկացությունները: **Թեմա 2՝** Էթիկետի տեսակների հակիրճ բնութագրություն: Ընդհանուր քաղաքացիական վարվեցողության նորմերն ու կանոնները /ճիշտ ներկայանալու և ներկայացնելու ձևերը, կոչումների և տիտղոսների գործածումը տարբեր երկրներում, վարվեցողության կանոնները հասարակական վայրերում, նվերների և ծաղկի էթիկետ և այլն/ – վերջնարդյունք՝ Իմանա և կարողանա կիրառել ընդհանուր քաղաքացիական վարվեցողության նորմերն ու կանոնները տարբեր իրավիճակներում: **Թեմա 3՝** Վարքի առանձնահատկությունները տարբեր ժողովուրդների մոտ պայմանավորված սոցիալ-մշակութային արժեքներով, հոգեկերտվածքով և այլն: Էթիկետի արևելյան և արևմտյան ուղղություններ – վերջնարդյունք՝ Տեղեկանա էթիկետային վարքի տարբեր մշակույթների առանձնահատկություններին՝ պայմանավորված սոցիալ-մշակութային արժեքներով, հոգեկերտվածքով: **Թեմա 4** Խոսքի /վերբալ/ էթիկետ: Էթիկետային կաղապարներ – վերնարդյունք՝ Ծանոթանա և կարողանա գրագետ կիրառել

տարբեր իրավիճակներում վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման նորմերին ու կանոններին տարբեր իրավիճակներում, այդ թվում՝ միջմշակութային հաղորդակցման ժամանակ: **Թեմա 5՝** Ոչ վերբալ էթիկետ և հաղորդակցություն /ժեստեր, դիմաշարժություն, աչքերի կոնտակտ, հաղորդակցության հեռավորություն / – վերջնարդյունք՝ Ծանոթանա և կարողանա գրագետ կիրառել տարբեր իրավիճակներում վերբալ և ոչ վերբալ հաղորդակցման նորմերին ու կանոններին տարբեր իրավիճակներում, այդ թվում՝ միջմշակութային հաղորդակցման ժամանակ: **Թեմա 6.** Դիվանագիտական էթիկետ և դիվանագիտական արարողակարգ հասկացությունները: Դիվանագիտական էթիկետի և արարողակարգի պատմությունից: Դրանց կիրառումը ժամանակակից պրակտիկայում: Դիվանագետի գործնական ու անձնական հանդիպումներ և գրույցներ, բարձր մակարդակի կոնտակտներ: Բանակցություններ վարելու էթիկետ: Այցեքարտեր և դրանց կիրառումը: Ընդունելություններ և դրանց տեսակները, հյուրերի տեղավորումը սեղանի շուրջ ընդունելությունների ժամանակ, ճառերն ու գրույցները սեղանի շուրջ: Հագուստը ընդունելությունների ժամանակ /դրես-կոդ/ – վերջնարդյունք՝ Տիրապետի դիվանագիտական էթիկետի և արարողակարգի հիմունքներին և դրանց կիրառմանը ժամանակակից պրակտիկայում: **Թեմա 7՝** Մշակույթ և հաղորդակցություն: Աշխարհի մշակութային պատկերը և դրա ընկալման բազմազանությունը: Մշակութային արժեքները և դրանց դերը ՄՄՀ մեջ: Մշակույթ և վարք: Կարծրատիպեր: Էթնոցենտրիզմը և դրա դերը ՄՄՀ մեջ: “Մշակութային շոկ” հասկացությունը, դրա պատճառները և հաղթահարման ուղիները: Հաղորդակցային անհաջողություններ, դրանց տիպաբանությունը, մշակութային և լեզվական կարծրատիպերը որպես հաղորդակցման ձախողումների պատճառ – վերջնարդյունք՝ Իմանա և կարևորի մշակութային արժեքների դերը միջմշակութային հաղորդակցման մեջ, կարողանա հասկանալ հաղորդակցման ձախողման և անհաջողության պատճառները՝ դրանք նվազագույնին հասցնելու նպատակով: **Թեմա 8՝** Էդվարդ Հոլլի “բարձր- և ցածր կոնտեքստի մշակույթներ, Գիրթ Հոֆստեդեի “մշակութային չափումների տեսություն”, Է.Հիրշի “մշակութային գրագիտության տեսություն” – վերջնարդյունք՝ Տեղեկանա միջմշակութային չափումների ժամանակակից տեսություններին՝ տարբեր ժողովուրդների վարքի դրսևորումները ճիշտ ընկալելու և հանդուրժողություն ցուցաբերելու համար:

Քննությունների անցկացման ձևը և գնահատման չափանիշները.

Նախատեսված 2 ընթացիկ քննությունները անցկացվում են ուսանողի գրավոր աշխատանքների ներկայացման գնահատման հիման վրա, յուրաքանչյուրը՝ 4 միավոր առավելագույն արժեքով:

Եզրափակիչ քննություն

Եզրափակիչ քննությունը բանավոր է՝ 10 միավոր առավելագույն արժեքով:

Հարցատումը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4,3,3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:

12/M04. Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրներ (3 կրեդիտ)

Շաբաթական 2 ժամ, 3-րդ կիսամյակ, եզրափակիչ գնահատումով դասընթաց

Նպատակը.

<<Միջազգային հարաբերություններ>> մասնագիտությամբ մագիստրոսական կրթություն ստացող ուսանողներին ներկայացվող <<Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրները>> դասընթացի նպատակն է վերհանել պատմական անցյալում ու արդի ժամանակաշրջանում հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանցքային հիմնախնդիրները, տալ դրանց առանձնահատկությունները, պատմահամեմատական վերլուծությունը, դասակարգել դրանք ըստ կարևորության ու առաջնահերթությունների, ինչը անհրաժեշտ է ինչպես պրակտիկ դիվանագետին, այնպես էլ միջազգային հարաբերություններն ուսումնասիրողներին, հետազոտողներին:

Կրթական արդյունքները.

Դասընթացի հաջող ավարտին մագիստրանտը.

1. կիմանա.

1.1 Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրները, դրանց առաջացման և զարգացման օրինաչափությունները,

1.2 Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրների հաղթահարման պատմական փորձը:

2. կկարդանա.

2.1 Պատմահամեմատական վերլուծության ենթարկել Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանցքային հիմնախնդիրները,

2.2 անցկացնել զուգահեռներ Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության ներկայիս և անցյալի հիմնախնդիրների միջև,

2.3 արժևորել Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կուտակված պատմական փորձը,

2.4 գնահատել հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության առանցքային հիմնախնդիրների հաղթահարման գործում առանձին պետական, քաղաքական և դիվանագիտական գործիչների դերը:

3. կտիրապետի.

3.1 Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրների մասին գիտելիքներին, արդի պայմաններում դրանցից դասեր քաղելու կարողություններին,

3.2 ստացած գիտելիքներով համապատասխան վերլուծություններ կատարելու ունակություններին

Բովանդակությունը.

Թեմա 1՝ Հայոց արտաքին քաղաքական և դիվանագիտական խնդիրները (ք.ա. 15-3-րդ դարերում): Արտաշեսյան Հայաստանի արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրները (ք.ա. 2-րդ – ք.հ. 1-ին դարերում) – վերջնարդյունք՝ Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության ակունքների, Արտաշեսյան Հայաստանի արտաքին քաղաքական և դիվանագիտական հիմնախնդիրների մասին գիտելիքներ: **Թեմա 2՝** Արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրները Արշակունիների օրոք (1-5-րդ դարերում): Հայոց արտաքին քաղաքականության և դիվանագիտության հիմնախնդիրները նախարարական ժամանակաշրջանում (5-9-

